



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԵՐԱՎԵՐԻ ՏՄԱՆ ԹՎԵԱ  
Ա. Ա. Ա. ԳՐԱԴՐԱՆ

ԱԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՎԱԾԲՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
1934 1934

891.99 | 24322

Q-91 | Иркутск, У.

Гнездо в кипарисе б/н  
1м.

1/xi | 28/VI ~





ԿՈՄՅԵՐԻ ՏԱՐԱՐԱԾՎԱՆ 15-ԱՎԱԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ


891.99

ԱԶՅԱԿԱՆ Հ 1981 թ.

Ա-91

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ա 5199  
24326



Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՅԵՐԵՎԱՆ - 1984

Պատ. Խմբադիր՝ Ա. Հարությունյան,  
Տեխ. Խմբ. Տ. Խաչվահյան,

Սրբագրիչ՝ Գալք. Հակոբյան.  
Գլավիս 8477 (բ), հրամ. № 2909,  
պատվ. 471, ափքաժ 3000;  
Հաճախված ե արտադրության և մարախ  
1934 թ., սառըագրված ե տպագրության  
համար 2/IV 1934 թ.

## ՍՈՆԱ

### 1

Մի քանի տարի առաջ յես ալելի յերիտասարդ եյի։ Յես հիմա ել նմ յերիտասարդ, բայց ուրիշ եր այն ժամանակ, ուրիշ՝ հիմա։ Զգում եմ, թե ինչպես անցնում են տարիները և յես մեծանում եմ։

Բայց յես բոլորովին չեմ տիսրում դրա համար և ինձ թվում ե, վոր կյանքի բոլոր տարիքներն ել հավասար չափով սիրելի յեն, վորովհետեւ ինքը կյանքն ե սիրելի։ Սակայն յերիտասարդությունն իհարկե ամենալավ ժամանակաշրջանն ե մարդուս կյանքում . . .

Յես այսոր պատահեցի Սոնային և հիշեցի, վոր մենք մի ժամանակ ծանոթ ենք յեղել միունյանց։ Հիշեցի, վոր մի ժամանակ յես ունա յեղել ենք մտերիմներ և նա շատ հաճախ ե ժպտացել ինձ իր պայծառ աչքերով։ Նա հաճախ նայել ե ինձ իր պայծառ աչքերով, վորոնց մեջ յես կյանքի ամբողջ ինդությունն եմ տեսել և զարնան շունչն եմ զգացել . . .

Յեվ ինչպէս կապվում ե նրա պատկերն իմ կյանքի այն շրջանի հետ, յերբ յես զեռ

Նոր եյի վոտք դնում յերիտասարդության շեմ-քին...

Այսոր յերբ նրա ամուսինը՝ նրա հետ միասին պատահեց ինձ և ուղեց ծանոթացնել մեզ միմյանց, աղջիկը ձեռքը չմեկնեց ինձ, այլ ասաց.

— Մենք վաղուց ծանոթ ենք միմյանց...

Այնուհետև մենք բաժանվեցինք:

2

Իմ հուշերի մեջ վորքա՞ն սերտ են կապված իրար հետ յերկրիս արշալույսն ու իմ կյանքի արշալույսը։ Առաջին բանը, վոր յես հիշում եմ, այն ձիավորներին են, վորոնք «Մարսելիով» յերգելով մտան մեր քաղաքը։

Այդ որվանից են սկսվում. իմ հուշերը։ Նրանից առաջ յես վոչինչ չեմ հիշում հիմա և յերբ աշխատում եմ վորեն բան մտարերել, աչքիս առջեւ պատկերանում և արյունոտ ու մոխրագույն մի քառս և ուրիշ վոչինչ...

1923 թվին եր: Բուռն վոգեվորությունների տարի։ Ամենուրենք «Բնտերնացիոնալ» ու միտինդ, ամեն շաբաթ զորահանդես, ամեն որ պատկումական շարքերը փողոցներում. և մեր, կոմյերիտականներիս հակակրոնական շքերթները։

Մեր ակումքը, վոր նախկին նահանգապետի չենքն եր, ամեն որ ու գիշեր լցված եր լինում յերիտասարդներով։ Յերեկները դասա-

իսոսություն եր լինում, յերգեցիկ խմբի պառապմունք, վորեւե ժողով, հավաքույթ և այլն, իսկ դիշերները ակումբի սենյակներից մեկում մենք պլակատներ եյինք նկարում հետեւյալ որվա շքերթի համար:

Հիշում եմ այդպիսի մի դիշեր:

Վերջացրի աստծու ծաղրանկարը և դլուիրս կուացրի սեղանին, մի քիչ նիրհելու համար: Սենյակում գտնվող մյուս յոթութ ընկերները լուռ շարունակում եյին իրենց աշխատանքը:

Շատ նիրհեցի, թե քիչ, չեմ հիշում. հիշում եմ այն, վոր դլուխս ծանրացել եր և յետուզում եյի լընել: Բայց այդ բանը համարյանարավոր չեր, վորովհետեւ այդ դիշեր ուրիշ շատ աշխատանք կար անելու:

Յել յես նիրհում եյի:

Ականջս ձայն ընկավ:

— Ա'ս'ս'...— արեցի յես քնի միջից:

Քիչ հետո՝ նորից: Կարծես մեկը բղավելիս լիներ ակտնջիս մոտ: Յես դլուխս չբարձրացրի, —քունս տանում եր, —այլ կրկնեցի նույնը: — Ա'ս'ս'...

Բայց ծիծաղի սուր ձայնը, վոր ինձ վոտքի հանեց, առիթ դարձավ վոր յես մի լավ բարեկանամ.

— Զե՞ք կարող լուռ աշխատել, տո շուն շան...

Ընկերներից մի քանիսի ներկոտ վրձինները բարձրացան և ուղղվեցին դեպի մեղա-

վորը։ Նոր միայն տեսա Սոնային, վոր կաշվե  
պինջակը հագին և դլխին կարմիր դլխաշոր  
կապած, կանգնել եր լուռ ու մունջ։

— Ի՞նչ գործ ունես կես զիշերին, զբաղ-  
ված մարդկանց մոտ, խանդարում ես, փառ-  
խի՛ր մորդ ծոցը, — մոմոացի յես ու նորից  
դլուխս կախեցի սեղանին։

Ընկերներս հանկարծ ծիծաղեցին ու միան-  
դամից լրեցին։ Սոնան դեռ չդիտեր ինչումն ե-  
րանը և հարցնում եր ծիծաղի պատճառը։

Եես նիրհեցի։

Մի պինդ հարված կողքիս՝ ինձ ստիպեց  
վեր թուչել։ Սոնան եր։

— Ինչ ասացի՞ր...

— Թող քնեմ, Սոնա։

— Զե, չե, ինչ ասացի՞ր։

— Թող քնեմ, ասում եմ։

— Թող քնի Արմենը, հոգնած և, — ասաց  
ընկերներից մեկը։

— Զեմ ուզում, — վոտքը գետնին խիեց  
Սոնան. — Թող ասի թե ի՞նչ ասեց քիչ առաջ։

— Վոչինչ։

— Զեմ, ասա։

— Կրակ խո չե՞ս։ Ասացի՝ փախիր մորդ  
ծոցը։

Ընկերների նոր ծիծաղը հարկադրեց Սո-  
նային հարմար պատասխան մինտընել։ Քիչ մը-  
տածելուց հետո, նա դանդաղ ասաց։

— Դո՛ւ փախիր...

— Ա՛խ, — ասացի յես կեղծ հառաչով, —  
յես ել եղափիսի մի տեղ եմ վնարում...

Ընկերներից վոչ մեկը դեռ հինգ բոպե  
չեր կարող աշխատել, բուռն ծիծաղի պատ-  
ճառով:

— Սոնա, մայրդ մեջտեղ գնաց:

— Վա՛յ, Սոնա, ո՞ւր փախչի Արմենը, մեկ  
ել ասա, ո՞ւմ մոտ:

Սոնան հաղթված նստեց, և յես շարունա-  
կեցի հանդիստ նիրհել:

Քիչ հետո մեկն ինձ ճայն տվեց:

— Արմեն...

— Հը...

— Ա՛յ Արմեն...

— Հը', Հը'...

— Գլուխդ կցավի: Յես կնստեմ, գլուխդ  
դիր ծնկիս ու քնիր:

Աչքերս բաց արի:

— Սոնա՞ , ելի դո՞ւ յես:

— Ասում եմ ծնկիս դիր գլուխդ, քնիր,  
հիմա՞ր, իսկ դու բարկանում ես:

— Հա՞ա՞ա՞ , լա՛վ, — ասացի յես առանց  
դարմանալու Սոնայի բարեսրտության վրա և  
գլուխս դըի ծնկին: — Իսկ դու փայտի նման  
պիտի նստե՞ս:

— Զե, յես աստվածածին պիտի նկարեմ:

Յես նիրհեցի, իսկ քիչ հետո, արդեն քը-  
նում եյի խորը քնով...

Յերևի Գուլիվերը, նավաբեկությունից  
հետո, ծովափին արթնանալիս, ինձ նման և

կապկապված յեղել։ Բայց նրա դեմքը սովորական և յեղել, առանց ներկվածների։ Իսկ իմ դեմքս... Սեղանին դրված հայելու մեջ մի սատանա տեսա։ Շարժվեցի վոր ավելի լավ նայեմ. — յես եմ։ Ուզեցի վեր կենալ, բայց բարձաթիվ դուտիներով ու օպարաններով կապված եյի նոտարանին։ Սոնան անհետացել եր։

— Լավ, Սոնա, յես քու հախիցը կդամ։

3

Յերեկոյան ժամը 5-ի մոտ, զողանջում եյին քաղաքի յեկեղեցիների զանգները, վորոնց մեջ ավելի ուժեղ եյին հնչում աստվածածնի յեկեղեցու զանգերը։ Քաղաքի փողոցներում անսովոր անց ու դարձ կար։ Դեպի յեկեղեցիներն եյին գնում բազմաթիվ մարդիկ ու կանայք, մանավանդ ծերեր և հասակավորներ։

Իսկ յեկեղեցիներից մի քիչ այն կողմ, ակումբում, հավաքվում եյին կոմյերիտականները։ Այդտեղ ևս նույն փութեկոտությունը, նույն արտակարգ բազմամարդությունը։

Ընթերցարանի սեղանների վրա լրագրեր չկային, պարապմունք չկար, վոչ ել դահլիճում ներկայացում։ Յերեսում եր, վոր կոմյերիտականներն այդ որը հավաքվում եյին իրոք վոր մի արտակարգ բանի համար։

Բոլոր սենյակներում լցված եյին նրանք։ Յեկ վորքան ել շատ լինեյին, այնուամենայ-

նիվ, մեղանից յուրաքանչյուրն անձնապես  
ծանոթ եր մյուս բոլորին, — այդ մեծ ընտա-  
նիքի, այդ մտերիմ ընտանիքի մյուս անդամ-  
ներին:

— Տղերք, Մկոն չկա:

— Ինձ հետ եր գալիս: Ճանապարհին  
մուրդ հանդիպեց, կանգնեց, հիմի կզա:

— Արտաշը յեկե՞լ ե:

— Զե:

— Սարդի՞սը, Հակո՞րը, Ցողի՞կը, Արա՞-

մը:

— Դահլիճումն են:

— Հրա՞չը, Հարությո՞ւնը, Սոնա՞ն, Գուր-  
դե՞նը, Մարո՞ն...

— Զե:

— Ուրեմն դեռ մի քիչ ել սակասենք: Դեռ  
ուշ չե, չե՞:

— Զե:

Ակումբի բակում գտնվող մի դռան մուտ  
կանգնել եյին տաս-քսան կոմյերիտականներ և  
նայում եյին ներս: Ներսից ինչ վոր մեկը դուռ-  
ուը ծածկում եր, սակայն քիչ հետո, դրսում  
հավաքվածները նորից բաց եյին անում և մի-  
ահամուռ ծիծաղում:

— Կտեսնենք հետո, ի՞նչ եք հավաքվել,  
տո՛: Ցըվեցեք: Մի՞ք խանդարի:

Խրատները քիչ եյին ներդործում և հա-  
վաքվածների ծիծաղն ու հետաքրքրությունը  
վոչնչով չեր նվազում: Թեև հավաքվածների  
մի մասը հույսը կտրած հեռանում եր, բայց

Գեռացողների տեղը բոնում եյին ուրիշները :

— Շարքի', — լսվեց հանկարծ :

— Շարքի', շարքի', — կրկնեցին բոլոր սենյակներում հավաքվածները և սկսեցին փողոց դուրս գալ: Դուան մոտ հավաքվածները շտապեցին շարք կանգնելու:

— Յերկ-յերկու:

— Յերեք-յերեք:

— Չորս-չորս:

— Քսանչորս-քառասունչորս:

Ծիծաղը պրծավ:

Յեկավ Ոնիկը, վորին կոմյերիտականները հրամանատար եյին ասում և բղավեց.

— Չո՞րս-չո՞րս...

Կարճահասակ Աշխիկը, վոր առաջին բոպեյին չեր յերեռում Ոնիկի յետեռում, նույնպես բղավեց.

— Չորս-չորս...

Ոնիկը յետ դարձավ: Շարքերում ծիծաղեցին:

— Տեղդ կայնի, ողնական հարկավոր չե:

Աշխիկը, զինվորական հաղթ քայլվածք ձեւվացնելով, մոտեցավ շարքերին:

— Տղեք ջան, ուլիցեն գնալիս, խոսելինդաւ չեղնի: Ման ոլում, ինչ կենաք երեք, նա մուսով գնացեք, կոմսոմոլիստի նման:

Շարքերն ուշադրությամբ լսում եյին:

Եվելպակաս լողունդ բաց թողնել չեղնի: Խուժանի պես չյերգեք. իրար հետ, մե ձենով...

Շարքերից մեկի ծայրում խոսում եյին:  
— Մո, եղտեղ սուս, յա՛: Ուխտավորի մշ  
խո չի՞ զռա: Բան հասկցեք, այ ողուլներ:  
Բոլորի նախատինքի ազդեցության տակ,  
ծայրամասը լոեց:

— Տղեք ջան, յերդը մտեհան չենք:  
Վով որ խոսքերը հլը լավ չե սորվե, թող  
Մկոյից առնե: Քովը տպած—պատրաստ կա:  
Շարքերում լուրջ լսում եյին: Ապա, հան-  
կարծ, բոլորի աչքերն ուղղվեցին դեպի ա-  
կումբի դուռը և բոլորը միասին փոթկացին:  
— Որհնյա՛ ի տեր, որհնյա՛ ի տեր, — լը-  
վեց այն կողմից:

Ոնիկը յետ շբջվեց և ինքն ել չկարողա-  
ցավ ծիծաղը զսպել: Այնքա՞ն նման եյին  
դուրս յեկել տերտերները, տիրացունները,  
չարչին, բուրժուան:

— Կուզիկ տերտերն ո՞վ ե:

— Մկոն ե:

— Կա՞րճը...

— Չի ճանաչվում:

— Տիրացո՞ւն:

— Մերդոն ե:

— Չե, Տիգրանն ե:

— Մերդոն ե:

— Ճիշտ ե, Մերդոն ե:

Եեվ այդպես, ճանաչեցին բոլորին, մինչեւ  
Հիսուս-Քրիստոսը, մինչեւ մայր աստվածածի-  
նը՝ վորը Սոնան եր, մինչեւ բուրժուան, բայց  
վոչ վոք չկարողացավ ճանաչել կարճլիկ տեր-  
տիրին:

Շարքերում աղմուկ ծայր առավի:  
— Կարճը...

— Կա՞րճը, կա՞րճը...

Կարճլիկ տերտերը կանգ առավ, ձեռքի  
խաչով խաչակնքեց և վորոտաց.

Խաղաղություն ամենեցուն:

Ականջ խլացնող հոհոցի միջից լսվեցին  
ձայներ.

— Հարությունն ե, Հարությունն ե:

Կերպարանավոխված խումբն անցավ շար-  
քի գլուխը:

— Ել չեմ ըսե, հա՞,— կրկնեց Ոնիկը:—  
Դուք ընձնից լավ կհասկնաք:

Ամեն ինչ պատրաստ եր:

— Բան-ման պակաս չկա՞: Բան մտեհան  
չերի՞ք, — համենայն դեպս հարցրեց Ոնիկը:

Ակումբի դռնից դուրս յեկան տասնհինգ-  
քսան կոմյերիտականներ՝ ձեռքներին հակա-  
կրոնական պլակատները, վորոնք մենք եյինք  
նկարել նախորդ գիշեր:

Շարքերում նորից աղմուկ ծայր առավ:

— Մեր խմբին պլակատ:

— Մի հատ ել մեղ:

— Մեզ ել, մեզ ել...

Ոնիկն ու Հրաչն արագ բաժանեցին պլա-  
կատները և շարքերում լռեցին:

Ոնիկը ձեռքերը կլորացրեց բերանի շուրջը  
և բղավեց.

— Առաջ...

Շարքերը լուս շարժվեցին:

Անցնելով մի քանի փոքրիկ փողոցներ, շարքերն ուղղվեցին դեպի գլխավոր փողուցը, ուր շատ մարդիկ կային:

Անցողները դարմացան: Ամբողջ փողուցով մեկ նրանք կանգ առան և սկսեցին նայել: Ոնիկը ձայն տվեց.

— Մկո, զիե...

Յեվ Մկոն սկսեց, աղխողորմ, ծիծաղից պայթեցնելու չափ վողբալի ձայնով.

Յերկինք, յերկիր, արքայություն,  
Ել չեն տալիս մեղ զորություն.

Ել չեն խուզվում մարդիկ հազար,  
Մորուքներս տանենք բաղար...

Ապա, վիզը յերկարացնելով և ձայնին տալով առասպելական բարձր նոտաներ, կը լուսցլեց.

Կո՞ո՞մսոմոլի զատիկն եկավ:

Վայ մեր որին, ես ի՞նչ եղա՞ա՞ա՞վ:

Ամառի շարքը թնդացըեց.

Կոմսոմոլի զատիկն եկավ,

Վայ ձեր որին, ես ի՞նչ եղավ:

Ասա բաց թողեցին մի քանի հակակրունական ողունդներ, ուռա բղավեցին, իսկ քիչ հետո Սլոն նորից սկսեց:

Փուղցի յերկու կողմերում, մայթերի վրա, պառերի պես խիտ կանգնել եր ժողովուրդը: Նրաց մեջ ծայրառավակ ծիծաղը, անվերջ ծիծաղը և ծափահարությունը: Իսկ հասա-

կավորներն ու պառավները խաչակնքում եյին  
և յերեսները շուռ տալիս:

Ու մինչեւ փողոցում հավաքվում եյին  
մարդկանց նոր և նոր հորձանքներ, մեր շարքե-  
րըն անցան առաջ և թեքվեցին մի ուրիշ փո-  
ղոց:

— Դեպի Փրկչի ժամը, — ձայնեց Ռնիկը:

Շարքերն ուղղվեցին դեպի այն կողմը: Յեկ  
յերբ բավական մոտեցել եյինք, նորից սկսեց  
Մկոն: Դեռ յեկեղեցու մուտքերին չհասած,  
շարքը խմբովին թնդացրեց յերդի կրկնողաւ-  
թյունը: Յեկեղեցու մի քանի դռներից դորս  
պրծան ներսում յեղողները և հենց այդտեղ ել  
քարացան:

— Մեղա՛ քեզ, աստված, մեղա՛, մե-  
ղա՛...

— Աստծու կրակը թափիվի ձեր վրա, կոմ-  
սոմոլներ:

Իսկ մեր շարքերից.

— Կրոնը աֆիոն ե, վոր թունավորոմ և  
ժասսաների ուղեղները:

— Կորչի կրոնը:

— Կեցե գիտությունը:

— Ուռա՛...

— Կեցե կոմունիզմը:

— Ուռա՛...

Յեկ նորից շարունակելով «կոմսոմոր դա-  
տիկը», շարքերը շարունակեցին ճանապարհը:

— Դեպի սուրբ Գրիգոր լուսավորիչը, —

Հրահանդեց Ոնիկը, և շարքերն ուղղվեցին դեպի այն կողմ:

Յեվ այնտեղ, նորից նույնը:

Աստվածածնի յեկեղեցին, իբրև ամենաբազմամարդն ու ամենակարևորը, մենք թողել եյինք վերջին հերթին:

Յեվ յերբ Ոնիկը վերջապես ձայն տվեց.

— Դեպի սուրբ կույս մայրիկ՝ Մարիամ մայր աստվածածինը, — ամբողջ շարքով, ծայրեծայր, անցավ ուրախ բացականչությունների ալիքը:

Մկոն կոկորդը մաքրեց: Պլակատներն ավելի բարձրացան և շարքերն ավելի աշխուժացան:

— Մարիամ աստվածածին, առաջ արի, — ասաց Ոնիկը:

Սոնան անցավ ամենից առաջ: Այդ նախապատրաստությունից հետո, շարքերը նորից առաջ շարժվեցին:

— Սոնա՛, գեղգեղա:

Սոնան սկսեց բարակ ձայնով.

Հայր Հովսեփը ամուսինս եր,

Հայր աստվածը սիրեկանս,

Հազար ջահել հրեշտակներ

Գիշեր-ցերեկ լցված տանս:

Վո՞րն ե հայրդ, Հիսուս, ասա,

Հայր Հովսեփօփը, թէ հայր աստված:

Այնքան վողբերդգրական եր յերդում Սոնան, վոր շարքերը թուլանում եյին անձայն և զսպված ծիծաղից: Կրկնողությունն ուշացավ:

Ոնիկն ուզում եր հրահանգել, բայց յերեսում  
եր, վոր հազիվ եր կարողանում ծիծաղը  
պահել:

— Դե՛, տղե՛կք... իհի՛, իհի՛... Դե՛,  
տղերք, յերդը կրկնեք: Իհի՛: Մտահա՞ն երիք:  
իհի՛, իհի՛...

Ոնիկի մեջընդմեջ ծիծաղն ամեն ինչ լրաց-  
բեց: Շարքերում ծիծաղը դուրս հորդեց.

— Ո՛հուհո...

— Ի՛հիհի...

— Ե՛հեհե...

Բայց հանկարծ, կարծես հրահանգով,  
բոլորը լռեցին:

Մոտենում եյինք յեկեղեցուն:

— Մկո՛, զլե...

Մկոն զլեց: Յեկեղեցուց դուրս թափվեցին  
ազոթականները: Դուրս թափվեցին նտես տեր-  
տերները՝ մեկի ձեռքում աղոթագիրք, մյուսի  
ձեռքում՝ բուրվառ, յերրորդի մոտ՝ մի ուրիշ  
բան:

Բայց այժմ վոչ միայն Մկոն, այլև ամբողջ  
շարքն սկսեց զլել:

Յերդի ձայնի մեջ խլանում եյին աղոթա-  
կան կանանց մրմունջները:

Զգիտես վրարտեղից, մի քանի կոմյերիտա-  
կաններ գտան մի սեղան և բերեցին: Հրաչը  
բարձրացավ սեղանի վրա:

— Ընկերներ...

Յեվ սկսվեց միտինգը: Տերտերները, տի-  
բացուները, աղոթականները, մոռացած ամեն

ինչ, զարմացած լսում եյին։ Մի տիրացու ձեռքի բնադրական շարժումով դեռ բուրվառում եր հավատացյալներին ու մոչ հավատացյալներին։

— ...Ձայնը տրվում և Մարիամ աստվածածածնին...

Բայց հազիվ եր Սոնան բարձրացել սեղանի վրա, յերբ մի քանի հարբած հավատացյալներ հարձակվեցին դեպի մեզ։

— Տո, դուք ո՞ւմ ասպածածնան ձեռ առնեք, յես ձեր մեծ ու պստիկը, — ասաց մեկն ու հարձակվեց դեպի Սոնան։ Մյուսներն ես։

— Ե՛յ, Ե՛յ, քաղաքացիներ, խենթացե՞լ եք, ի՞նչ է, — բղավեցին շարքերի միջից։ Բայց դրությունը պետք եր այլ կերպ փրկել, վորովհետեւ հարձակվեցին նորանոր հավատացյալներ։

Շարքերը խառնվեցին։ Կոմյերիտականները շրջապատեցին անկարգություն անողներին և Սերգոյի ու մյուսների մկանուտ թևերը մի քանի բոպեյում բռնեցին նրանց բոլորին։ Խավեց Սոնայի ձայնը։ Յես վագեցի դեպի նաև հասա ճիշտ այն բոպեյին, յերբ հարբած մի մարդ ուզում եր բռունցքն իջեցնել նրա գլխին։ Յես պինդ բռնեցի նրա թևը և յերեսն ի վեր սուլեցի։

— Ֆյո՛ւ... Ղուռռմսա՛ղ...

— Շարքե՛րը, — լսվեց Ռնիկի ձայնը։ Բոռը նորից կանգնեցինք շարքի և վերադար-

ձանք։ Մինք նորից վողողեցինք փողոցները  
մեր յերդի հնչումներով։

Կո՞մսոմոլի զատիկն եկավ,  
Վա՛յ ձեր որին, ես ի՞նչ յեղավ...

Մութն եր, յերբ հասանք ակումբ։  
Սոնան և մյուսներն սկսեցին հանել իրենց  
շորերը և նորից վերածվել կոմյերիտականնե-  
րի։

Մոտեցա Սոնային։

— Սոնա...

— Ի՞նչ։

— Արի առեմ։

Սոնան յեկավ։ Նայեցի շուրջս։ Սենյակում  
մարդ չկար։

— Յեկ, ականջիղ բան եմ ասում։

Սոնան ականջը մոտեցը եց դեմքիս, բայց  
յես, փոխանակ բան ասելու, բռնեցի նրա  
գլուխը յերկու ձեռքերով ու համբուրեցի նրա  
յերեսը։

— Կերա՞ր... Ես ել քեզ յերեկ գիշերվա-  
պատասխանը։

— Վա՛յ, ինչքան վատն ես, — մըմնջաց Սո-  
նան։ — Ամոթ ինձ, թե ուրիշ անդամ քեզ հետ  
մենակ մնամ։

Յես դուրս յեկա տենյակից գոհ սրտով,  
վոր լա՛վ վրեժիսնդիր յեղա Սոնայից։

Համբուրը վոչ մի ազդեցություն չթողեց  
ինձ վրա և յես շուտով մոռացա այդ։

Յերիտ-ակումբում, բացի ակումբի թատե-  
րական սեկցիայից, կար նաև մի ուղիւշ թատե-  
րական խումբ, — շրջիկ խումբ, — վորը հայտնի  
յեր Նիկոլի խումբ անունով:

Յերբ յես մտածում եմ այդ խմբի մասին,  
աչքերիս առջև պատկերանում ե Նիկոլը, հա-  
տակի խողանակը ձեռքին կամ վերարկուն  
թարս հաղած:

Նիկոլի խումբը: Ո՞ւմ հայտնի չեր: Դժվար  
թե վորեե ակումբում կամ դահլիճում դասա-  
խոսություն ու ժողով տեղի ունենար, առանց  
Նիկոլի խմբի ներկայացման: Հրավիրում եյին:  
իսկ յթե չհրավիրեյին, Նիկոլն ինքը կգնար  
համապատասխան մարդու մոտ և կասեր.

— Ընկեր, մենք ուզում ենք ձեր ժողովից  
հետո ժողովականների համար բեմադրել մի  
քանի փոքրիկ կոմեդիաներ:

— Խնդրեմ: Բայց ինչո՞ւ նախապես չասե-  
ցիք, վոր նախապատրաստություն տեսնեյինք:

— Վոչինչ, մենք ամեն ինչ պատրաստել  
ենք:

— Խնդրեմ, խնդրեմ...

Շատ քիչ եր պատահում, վոր Նիկոլի  
խումբը յելույթ չունենար: Դա լինում եր սգա-  
հանդեսների կամ մահվան տարեդարձերի  
ժամանակ, վորովհետև Նիկոլն ու իր խումբը  
միայն կոմեդիա խաղացողներ եյին և կապ չու-  
նեյին վողբերդության հետ:

Յեվ այսպես, իր բաղմաթիվ կոմեղիաներով, Նիկոլի խոմքը շրջում եր ակումբից-ակումբ, գյուղից-դյուղ։ Հաճախ, մի որվա ընթացքում նրանք ներկայացում եյին կազմակերպում յերկու և նույնիսկ յերեք տեղում։

Շատ հազվադեպ եր, վոր Նիկոլի խմբի ներկայացումները վճարովի լինելին։ Յեվ այդ ել այնպիսի դեպքերում եր պատահում, յերբ խոռմքը դրիմի և այլ պիտույքների կարիք եր ունենում կամ ուզում եր վորեւ գյուղ զնալ և փող եր հարկավոր լինում։

Այդպիսի դեպքերում Նիկոլի ձեռագիր ա-ֆիշաները լինում եյին մեկից ավելի, այն ել քաղաքի աչքի ընկնող տեղերում կպցրած։

Ահա դրանցից մեկը։

«Յերեքաբթի, հունիսի 6-ին, յերիտակում բում, շրջիկ թատերական խոմքը, Նիկոլի դեկավարությամբ, կրեմադրի «Կորչի բուրժույց» կոմեղիան 1 գործողութ., հեղ. Նիկոլի։ Ռեժիսոր՝ Նիկոլ։ Գլխավոր դերերում (այրու-բենական կարգով)՝ Նիկոլ, Արուս, Բագրատ, Դրիգոր, Դայդայ, Թամարա, Լյուսի և այլն։ Աղմինիստրատոր՝ Նիկոլ։ Տոմսերը կարելի յե զնել ներկայացման որը՝ կասսայում, իսկ մինչեվ ներկայացման որը՝ Նիկոլի մոտ։»

Իսկ աֆիշայի ներքեմի մասում՝ մի կողմում՝ «սկիզբը ժամի 8-ին», մյուս կողմում՝ «քեմադրություն Նիկոլի»։

Շատ կարևոր եր վերջին հանդամանքը։ Բեմադրություն Նիկոլի, —դա նշանակում

ե, վսր պիեսի մեջ պետք եւ լինեն առնվազն յիշը ուտելու տեսարաններ, վորտեղ բուրժուաներն ուտում են, ուտում են արագիլելու չափ, իսկ դահլիճում ծիծաղում եւ ժողովուրդը:

Վոչ մի դեկորացիա հարկավոր չեր Նիկոլին: Միայն հաց, պանիր և մի քիչ ել վարունգ ու կանաչի: Նա դիտեր այդ բոլորից պատրաստէլ մի ճոխ սեղան, վորից բուրժուաները պետք եւ ուտելին:

Վորսկեսզի լավ «խաղա», Նիկոլը ներկայացումների որերին համարյա վոչինչ չեր ուտում: Յեկի իրոք, յերեկոյան նա «խաղում եր» շատ լավ: Նայում եին դահլիճում հավաքված ները, կուշտ ծիծաղում և ծափահարում: Յերբ վերջանում եր ներկայացումը, Նիկոլն իր խմբով վազում եր դեպի մի ուրիշ ակումբ, այստեղ ել մի յերեք-չորս հատ փոքրիկ կոմեդիաներ «ուտելու»:

Նրա խմբում կային տաս-տասներկու հոգի: Նրանցից վոչ մեկը դժգոհ չեր Նիկոլի դերաբաժանությունից, թեև միշտ ել առյուծի բաժինը—դլամավոր դերը, —վերցնում եր ինքը, անխուսափելի Նիկոլը:

Ահա այդ խմբի հետ եր, վոր յես ու Սոնան, նաև մի քանի ուրիշ կոմյերիտականներ, առաջին անգամ գնացինք պյուղերն եքսկուրսիայի:

Ամառն եր: Արեւ պայծառ եր փայլում դաշտէրի վրա և հեռու դյուղերը յերեւում ելին վոսկե կիսամշուշի մեջ: Ակումբից դուրս

դալով, մի որ յես, Սոնան և ելի մի յերեք-չորսը, գնում եյինք դաշտ, զբունելու:

Առնան նայեց դեպի մի հեռու գյուղ և ասաց.

— Գյուղը...

— Իսկապես, վաղուց ե, վոր գյուղ չենք գնացել: Արժե մոտ որերս անպայման գնալ:

— Բմ, արժե:

Հարցրի: Սոնային:

— Դու ի՞նչ ես ասում, Սոնա, հ՞ը:

— Արժե, իհարկե:

— Ասում եմ՝ գնանք դասախոսություն տանք, խոսենք գյաւղացիների հետ: Կծանոթանք, մի քիչ կզբունենք և ուրիշ շատ բան:

Մեկն առաջարկեց.

— Նիկոլի խոմբն ել տանենք մեղ հետ:

— Հա՛, տանենք, ճիշտ վոր, շատ լավ կլինի: Ներկայացում կտան, ժողովուրդ կհվաքվի:

— Կդա՞ս, Սերդո:

— Կդամ: Կդա՞ս, Սոնա:

— Կդամ: Կդա՞ս, Հարություն:

Համաձայնությունը շատ շուտ կայացավ: Վորոշեցինք շաբաթ յերեկոյան մեկնել, կիրակի որը մնալ և յերկուշաբթի վերադառնալ: Ընտրեցինք մի հեռավոր գյուղ:

Գյուղը, վորտեղ պետք ե գնայինք, ունեք բեմ և դահլիճ, վոր գտնվում եր դպրոցի չենքում: Իսկ դպրոցի շենքը գյուղի ծայրին եր, մի ժիոքրիկ բլուրի վրա: Մի ժամանակ յեկեղեց

յի ել եր յեղել այդանո՞ւ, բայց հետո նա փուլ եր  
յեկել և ժամանակի ընթացքում բոլորովին  
քանդվել եր ։ Բլուրի վրա մնացել եր միայն  
գպրոցի շենքը ։

Յերբ մենք գյուղ հասանք, արդեն մութն  
եր և յերեսում եյին շատ փոքրիկ լույսեր ։ Դպրո-  
ցում լույս չկար ։ Մեղանից մեկը, —կարոն, —վոր  
ծանոթ եր այդ գյուղին, մեղ ուղեկցեց գյուղ-  
խորհրդի նախագահի տունը ։

— Բարեւ, —ասաց նա ։

— Այս, ասսու բարին, կոմսոմոլներ, —ա-  
սաց նախագահը ժպտալով և մոտեցավ մեզ ։ —  
Ներս յեկեք, միմի չայ անուշ արեք ։

— Շնորհակալ ենք ընկեր ։ Մենք յեկել ենք  
ճշկուրսիայի և ուզում ենք վաղը յերեկոյան  
մի ներկայացում ու մի դասախոսություն  
տալ . . . կողնե՞ք ։

Նախագահը թեկերը կանթեց մեջքին ։

— Աչքիս վրա, կոմսոմոլներ ։

իսկ քեզ հետո ։

— Ներս եկեք, դռան մեջտեղն ինչի՞ յեք  
կանգնել ։ Շատ ել կոմունիստի տուն չի, խո-  
ստանի տուն ել չի՞ ։ —կատակի տվեց նա ։

Մենք ծիծաղելով ներս մտանք ։ Նախագահի  
կինը վոտքի կանգնեց և ուզում եր մեր ձեռքը  
համբուրել, բայց չկարողացանք հասկանալ, թե  
ինչ միջոցներով նախագահը նրան հասկացրեց  
այդպիսի բան չանել ։

— Մի տեղ կարո՞ղ եք գտնել, վոր այսոր

ու վաղը քնենք, — հարցրեց մեր ընկերներից  
մեկը:

— Վայ: Եղ ի՞նչ խոսք ե: Իմ առընս տուն  
չի: Ուղում եք՝ մի շաբաթ մնացեք:

— Զե, ընկեր նախադահ, ձեզ նեղություն  
կտանք: Ախր շատ ենք, տասնութ հոգի:

— Նեղությունն ինչ խոսք ե: Ողան մեծ,  
ծալքի մեջ ել—փառք... Դե՛, ծալքի մեջ ել տե-  
ղաշորը պակաս չի, — ասաց նա:

Մնացինք նախադահի մոտ: Նստեցինք:  
Հայագլեցին մի քանի դրկիցներ: Նրանք հե-  
տաքրքրությամբ նայում եյին մեզ, բայց առա-  
վել ևս Սոնային, վորը միակ աղջիկն եր մեր  
մեջ: Յերեսի նրա կարմիր գլխաշորն ու կաշվե  
պինջակը շատ եր զարմացրել նրանց:

Նախադահը խոսում եր մերոնց հետ: Պա-  
րենտուրքի մասին հարցրեց, իշխանության  
մասին և նման բաների: Մի ժամ այդպես խո-  
ռելուց հետո, դարձայ իր կնոջը.

— Աղջի, ողայում տեղ գցի: Ճամբա յեն  
եկել, բնողարած կլինեն:

Կինը գնաց ողան, իսկ նա շարունակեց մեզ  
հետ խոսել.

— Շատ ջահել եք, դեռ ձեր կյանքի գինը  
չդիտեք: Վոր ասեմ՝ մինչև լուս նստենք,  
կնստեք: Բայց շուտ քնողը շուտ ել կզարթնի,  
առավոտված հովին վեր կկենա, համ առողջ  
կլինի, համ ել դործունյա...

Յերբ գնում եյինք քնելու, նախադահը մեղ  
հարցրեց.

— Որիորդը վորի՞դ կողակիցն եւ: Ուզո՞ւմ  
եք՝ կողինքն եստեղ փռեմ:

Բարձրացավ ծիծաղ:

— Ընկեր նախագահ, մենք բոլորս եւ ա-  
մուրի յենք: Սոնան եւ...

— Հա՞—Հարցրեց նախագահը: — Յես ախր  
ասի, վոր եղակես կլինի...

Բայց յերեսում եր, վոր նա շատ զարմացավ,  
թե ի՞նչպես կարող եր մի աղջիկը տասնութ  
տղայի մեջ ամուրի մնալ:

Բոլորս զնացինք ողան և հանվեցինք քնե-  
լու: Առնան նստած սպասում եր, աշխատելով  
մեր կողմը չնայել: Ապա հարցրեց.

— Պրծա՞ք:

— Պրծանք:

— Փուհ, — վիչեց ճրագը Սոնան և սկանեց  
հանվել:

Քիչ հետո բոլորս քնեցինք:

### 5

Մինչև այստեղ յես քեզ այսպես եմ հիշում,  
սիրելի Սոնա: Հիշում եմ մեր այն ընկերական  
լավ կյանքը և քեզ, իրեն սիրելի ընկերուհի:  
Իսկ դրանից հետո իմ հուշերն ուրիշ դույն ու-  
նեն և ուրիշ յերանգ:

Յերեկոյան մենք քնեցինք իբրև ընկերներ,  
իսկ հետևյալ որվանից յես քեզ սիրում եյի,  
Սոնա':

Ինչի՞ համար այդպես հանկարծակի ուս-  
տահեց այդ բանը:

Նրա՞ համար, վոր արդեն իմ սիրելու ժամանակն երև և միայն մի փոքր առիթ եր պետք, վոր դու իմ սրտում ընկերուհուց վերածվեյիր սիրուհու...

Նրա՞ համար, վոր այդ որն առաջին անգամ յես տեսա թե ինչպես քո կարմիր դլխաշորի ու կաշվե պինջակի տակից իր դեմքը ցույց տվեց աղջիկը...

Զգիտեմ: Յեվ ի՞նչ կարիք կա անպայման զիտենալու այդ բոլորը...

Միայն մի փոքրիկ, մի հասարակ բան առիթ դարձավ, վոր դու վտխվեյիր իմ աշքում:

Ներկայացումը վերջացնելուց հետո, դերակատարներն ամեն կերպ, ինչպես վոր կարող եյին, մաքրում եյին իրենց դեմքերը: Դու մասնակցել եյիր ներկայացմանը և քո դեմքի վրա ել կային դրիմի հետքեր: Կարոն մի շորէ կտոր եր վերցրել և մաքրում եր դեմքդ:

— Ի՞ն, լավ ջես կարողանում մաքրել, — ասացիր դու և հարցրեցիր.

— Զուր կա՞:

Զուր չկար:

— Առուն մոտիկ ե, — ասաց կարոն, — զնտվացվիր:

Տղաների քունը տանում եր: Նրանք շտապում եյին պառկել և վաշվոք չեր ուզում քեզ ընկերակցել մինչև առուն: Յես ասացի.

— Գնանք, Սոնա, յես կգամ:

— Զեմ գա քեզ հետ, դու համբուրում ես —  
ասացիր դու, ապա դարձար մյուսներին.

— Դե ձեզանից մեկն նև թող գա ինձ ու Ար-  
մենի հետ:

Այդպես ել յեղավ:

Սոնա՛, ինչի՞ց եր այն, վոր դու շա՛տ լավ  
ասացիր այդ: Յես քեզ նայեցի և առաջին ան-  
գամ բուռն ցանկություն ունեցա քեզ համբու-  
րելու, ոլի՛նդ, ոլի՛նդ համբուրելու լրթունք-  
երդ և ասելու.

— Հ՞ը, վախենո՞ւմ ես իմ համբուրելուց.  
Կե առ...

Այդ խոսքերիդ ժամանակ, Սոնա, քո կաշ-  
վե պինջակի տակից, խսկապես վոր իր դեմքը  
ցույց տվեց աղջիկը...

Եերբ այդ գիշեր պառկեցինք, յես յերկար  
ժամանակ չեյի քնում և մտածում եյի: Յեվ  
պատահած չնչին մանրամասնություններ,  
փոքրիկ դեպքեր, սկսում եյին ուրիշ կերպ յե-  
րեվալ աչքիս:

Հիշեցի, թե ինչպես մի անդամ յես գլուխս  
դրել եմ ծնկիդ և քնել եմ: Յեվ դա ինձ շատ  
դուր յեկավ: Հետո հիշեցի, թե ինչպես համ-  
բուրել եմ քեզ: Յես համբուրել եմ Սոնային,—  
մտածնցի: Բայց ինչո՞ւ համար մինչև հի-  
մա այդ բանն ինձ վրա վոչ մի տպալորու-  
թյուն չի արել: Խսկ հիմա, քիչ և մնում վեր  
կենամ և դնամ նրա մոտ, վոր պառկել և ին-  
ձանից մի քանի քայլ այն կողմ, գնամ և ա-

սեմ:—Սոնա ջան, թույլ տուր քեզ հետ քնել:  
Յես միայն մի անդամ կհամբռւրեմ քեզ, կըդր-  
կեմ և կքնենք: Ուրիշ վոչինչ...

## 6

Շատ բան փոխվեց այդ որվանից:

Զգիտեմ, գուցե Սոնան նկատել եր իմ վե-  
րաբնըմունքի փոխվել իր հանդեպ: Յես նրա  
հետ այժմ անհամարձակ եյի խոսում և այլիս  
առաջվա նման ընկերական անփութությամբ  
չեյի վարվում: Մանավանդ խուսափում եյի  
այն կատակներից, վորոնց ընթացքում կարող  
եյի բռնել նրա թեր, խփել ուսին և այլն: Այդ  
բռնորի մեջ յես այժմ նոր իմաստ եյի դնում ու  
նոր բովանդակություն:

Ինձ թվում եր, վոր Սոնան նկատել եր փո-  
փոխությունը: Նա, վոր մյուս բռնորի հետ ա-  
ռաջվա նման պարզ եր և ընկերական, ինձ հետ  
խռսելիս, մանավանդ յերբ մենք առանձին ե-  
յինք լինում, —դառնում եր սակավախոս ու  
լուռ: Կարծես խոռնլու վոչ մի բան չկար և մենք  
ինչ վոր անհարմար դրության մեջ եյինք  
դտնվում: Յերբեմն այդ դրությունն ինձ  
թվում եր սպասողական:

Մի որ, կեսորին, յես ներս մտա ակումբ և  
գնացի ընթերցարան, վորի լուսամուտները նա-  
յում եյին դեպի ակումբի բակը: Սոնան ընթեր-  
ցարանումն եր: Նրան տեսնելուն պես, յես թո-  
ղեցի կարդալու միտքը և կանդնելով լուսամու-  
տի մոտ՝ սկսեցի նայել դուրս: Արևոտ ցերեկ եր

և ակումբի բակը, ուր միայն մի ընկու-  
զենի կար և վոչ մի ուրիշ ծառ, — վողողված  
եր արևի տաք լույսով: Այդպես քիչ կանգնե-  
լուց հետ յես դուրս քեկա բակ: Զեռքերս դրի  
դրալաններս և կանգնեցի դռան մոտ: Վոշինչի  
մասին չեյի մտածում:

Քիչ հետո բակ դուրս յեկավ Սոնան: Ինձ  
տեսնելով դռան մոտ կանգնած, նա արագ ան-  
ցավ և գնաց դեպի ընկուզենին:

— Զբարեեց, — մտածեցի յես:

Սոնան մի ձեռքով հենվեց ընկուզենուն,  
մտածկոտ կռացրեց դլուխը և նայեց իր վոտ-  
քին, վորի ծայրով խաղում եր գետնի հետ:

Մոտեցա նրան:

— Բարե, Սոնա:

— Բարե...

— Ի՞նչ խոսեմ, — մտածեցի յես: Սակայն  
մտքերս չեյին կենտրոնանում: Լուռ կանգնեցի  
նրա մոտ:

Կաշվե պինջակը նրա հաղին եր: Կոճակնե-  
րը քանդվել եյին և տակից յերեսում եր նրա  
մուղ— կարմրագույն վերնազգեստը: Յես սկսե-  
ցի նայել նրան:

— Ինչքա՞ն սազում ե, — մտածեցի յես:

— Սոնա, — ասացի:

— Ի՞նչ ..

— Դու ինչո՞ւ յես կաշվե պինջակ հագ-  
նում...

Սոնան նույն դիրքով խաղում եր դետնի  
հետ: Քիչ հետո պատասխանեց.

— Սիրում եմ։  
 — Դիտե՞ս, Սոնա, առանց պինջակի տ-  
 վելի լավ ե, չե՞ս հանի...  
 — Ինչո՞ւ յես ուզում վոր հանեմ, — կամա-  
 ցուկ հարցրեց նա։  
 — Հենց այնպես... Լավ կլինի...  
 Սոնան ուզում եր պատասխանել, բայց  
 նույն բողեյին Գարեգինը դուրս յեկավ բակ  
 և բղավեց։  
 — Սո՞նա, բեկ, արդեն հավաքվել ենք։  
 — Սոնան կարծես սթափվեց, հանկարծակի  
 փոխվեց, ծիծաղեց և պատասխանեց։  
 — Յեկա։  
 Յեվ վաղեց։  
 Յես նատեցի ծառի տակ և սկսեցի մտա-  
 ծել։ Սոնա... Ինչո՞ւ յե իմ նկատմամբ փոխ-  
 վել... Ահա մի ուրիշը և նա դարձյալ նախ-  
 կինն ե...  
 Ինչո՞ւ յե փոխվել...

7

Մի քանի որ հետո, ակումբում, նորից  
 հանդիպեցի Սոնային։ Մի քանի ընկերներ հա-  
 վաքվել եյինք ակումբի բակում և զբույց եյինք  
 անում։ Բակ մտավ Սոնան։ Նայեցի նրան և հան  
 կարծ սիրտս տրովեց։ Նա հանել եր իր կաշվե  
 պինջակը և քանդել եր կարմիր գլխաշորը։ Հա-  
 դին ուներ այն մուզ-կարմիր վերնազգեստը։  
 Կարճ կտրված մազերը դեղեցիկ կերպով բու-

լորել եյին նրա դլխի շուրջը։ Նա ուրախու-  
լախ մոտեցավ հավաքվածներին։

— Ոչո՞ , Սոնա՞ . . .

— Սոնա , գեղեցկացել ես :

— Սոնա , իսկական աղջիկ ես դարձել։  
Յես ուզում եյի արտասավոր չերեալ , ուս-  
տի ուրախ ժողովով դիմեցի նրան .

— Այ , այսպես շատ գեղեցիկ ես :

Սոնան նայեց ինձ :

— Գիտե՞ս , չկարծե՞ս թե քո խոսքերիդ հա-  
մար եմ պինջակս հանել :

Ապա դարձավ մյուսներին .

— Անցյալ որն ինձ ասում եր պինջակդ  
հանիր , կգեղեցկանաս : Հիմա հանել եմ , նա-  
ել պիտի կարծի , թե իր խոսքերի աղղեցու-  
թյան տակ . . .

Աւ ծիծաղեց :

Իսկ յես շփոթվեցի : Ինչո՞ւ հիշեցրեց այն  
առանձին խոսակցության մասին , և այն ել  
այսպիսի ձևով . . .

Առանձնացա :

Նստեցի և սկսեցի մտածել : Ի՞նչ միամիտն  
եմ , իսկ յես կարծում եյի , թե նրա մտքումն  
ել մի բան կա : Բայց ահա , նա առաջին իսկ  
պատեհ առիթին կատակի յե վերածում այն ,  
վորն իմ կարծիքով մի բանի սկիզբ եր . . .

Բայց ցե , դու ինձ չես խարի , Սոնա : Դու  
ինձ համար ես հանել կաշվի պինջակդ և քան-  
դել գլխաշորդ : Յես այդ գիտեմ . . .

Յեվ այդուես, իմ մեջ կովում եյին յերկու մտքեր: Ինձ համար, թե վոչ: Յերբեմն այդ մտքերից մեկն եր տիրապետում, յերբեմն՝ մյուսը: Ու յես չեյի կարողանում դլուխ հանել: Յեվ այս անորոշության մեջ անցան որեր:

Շատ հաճախ պատահում եր այդ որերին, վոր յես վճռում եյի զնալ Սոնայի մոտ և ամեն ինչ հայտնել նրան: Ինձ թվում եր, վոր նա ինձ կլսեր լրջությամբ և ուշադրությամբ, ապա կժամտար և կփաթաթվեր ինձ...

Բայց հանկարծ հիշում եյի, թե ինչպես ուրիշների մոտ խոսեց այս համբույրի մասին: Մի՞թե վաղն ել վեր չի կենա և չի պատմի բոլորին, վոր յես իրեն սիրում եմ: Կպատմի ու կծիծաղի, կծիծաղացնի նաև մյուսներին: Իհարկէ, յեթե չի սիրում ինձ, այդպես կվարվի...

Իսկ յես ի՞նչ գիտեմ, ոիրո՞ւմ և թե վոչ...

8

Այ, ամբողջ պատմության հետ սերտ կառված և իմ՝ քաղաքից Ենոանալու գեղքը: Ո՞վ դիտե, թե իր կյանքի մեջ մի փոքրիկ գեղքն ինչպիսի փոփոխություններ կարող ե բերել: Յեթե յես քաղաքից չհեռանայի, — չտեղափոխվեյի ուրիշ քաղաք, ո՞վ գիտե, թե ինչպես դասավորվեր իմ ու Սոնայի պատմությունը:

... Ամեն տեղ յերիտ-ակումբ կա և ամեն տեղ կան ընկերներ: Ամեն ակումբ ունի իր

Դարեգինն ու Ցողիկը, Մարդոն ու Աշոտը, Կարոն ու Սեթոն...

Ամեն տեղ յես կզտնեմ ինձ ընկերներ: Ամեն տեղ կունենամ մտերիմ Հրաչ, չորաճճիռւթյամբ լցված յեռանդուն Աշիկ և վիճաբանության մարմաջով բռնված «հակառակորդ» Անիկ...: Բայց դժվար թե յես մի ուրիշ Սոնա գտնեմ այստեղ, վորովհետեւ, միւնույնն ե, յես նրան ջնմ փնտրելու, քանի վոր ինձ դեռ շատ սիրելի յե այստեղի Սոնան...

Մտա ակումբ, մնաս բարե ասացի ընկերներին և դուրս յեկա: Փողոցում ինձ հանդիպեց Սոնան, վոր դեղի ակումբ եր դալիս: Բայց ինձ թվում ե, վոր յերբ յես ներս մտա, նա ակումբումն եր և հետո դուրս յեկավ, յերեկ ինձ հետ մենակ հանդիպելու հայֆար...

Բայց ինչո՞ւ պիտի այդպես լինել...

— Մնաս բարե, Սոնա, — ասացի յես տիտուր:

— Գնո՞ւմ ես, — հարցրեց նա և նրա ձայնի մեջ յես չնկատեցի տիսրության վոչ մի շեշտ:

— ...Գնում եմ...

Մի քիչ տեղ քայլեցինք միասին: Յես մը տածում եյի, վոր յերբ անկյունին հանսենք, կը ունեմ նրա ձեռքը և կասեմ.

— Սոնա, յես քեզ սիրում եմ: Ուզում ես ծիծաղիր ինձ վրա, ուզում ես վոչ: Մտածիր և նամակով պատասխանիր:

Ապա կթողնեմ նրան և արագ կհեռանամ։  
Բայց ուրիշ կերպ պատահեց։ Դեռ ան-  
կայունին չհասած, Սոնան ինքնիրեն ծիծաղեց և  
ասաց։

— Աշխատիր այնտեղ ել չհարձակվել աղ-  
ջիկների վրա և համբուրել։ Դնաս բարեւ։ — Ա-  
պա նորից ծիծաղեց ու հեռացավ։

Միամի՛տ, ասացի ինքս ինձ։ Կատակը<sup>1</sup>  
լուրջ ես ընդունել և կարծել ես, վոր ուրիշ բան  
կա նրա մտքում։ Բայց Սոնան նախկինն և և  
վոչինչ չի վախճել նրա մեջ։ Յես եմ միայն,  
վոր սիրում եմ և զրկվել եմ սառնարյուն կեր-  
պով դատելու ընդունակությունից . . .

## 9

... Հետո այդ քաղաքը։

Հասարակական աշխատանքների ծովի մեջ  
իմ բոլոր անձնական զգացմունքները քաշվե-  
ցին յետ, — թագնվեցին։

Վեց ամիս յես աշխատում եյի և վեց ա-  
միս շարունակ չեյի հիշում այդ փոքրիկ  
ոյատմությունը։ Յերբեմն միայն, յերբ նա-  
մակ եյի գրում ընկերներին, բարեւում եյի  
և Սոնային։

Այդքանը։

Ենվ այսպես անցավ վեց ամիս։

Մի որ, յերբ տանը նստած եյի, դուռը թա-  
կեցին։

Բաց արի։

— Սոնա՞ . . .

— Յես եմ:

— Այս ի՞նչպես...

— Յեկանք եքսկուրսիա: Յես ազատ ժառանակ գտա և յեկա քեզ տեսնելու, հին ընկերներ ենք, չե՞...

— Դե, յեկ ներս:

Սոնան ներս յեկայի և նստեց: Նա հագել եր ավելի «աղջկական» և ավելի զեղեցիկ եր յերեւմ այդ շորերի մեջ: Ուր կաշվե պինջակը, ուր սա...

— Ինչքա՞ն ես փոխվել, — ասաց նա ինձ: — Ճա՞տ ես փոխվել:

Ապա, մի քիչ լոերուց հետո՝

— Ախր ժամանակ ե անցել...

— Սոնա, — ասացի յես, — անցած բաների մասին խոսելը ներելի յէ: Յես քեզ մի բան պիտի ասեմ: — Գիտե՞ս, անցած բան: Չծիծաղես:

— Զե, ինչո՞ւ պիտի ծիծաղեմ:

— Ե՛ս, Սոնա: Մարդ ինքն ել չդիտի, թե վաղը կամ մյուս որն ինչ պիտի լինի: Անցյալի մասին խոսելն ավելի հեշտ ե: Դու դիտե՞ս վոր յես քեզ սիրում եյի...

Նա ծիծաղեց.

— Գիտեմ:

— Իսկ դու չե՞յիր սիրում, հ՞ը...

— Զե, — պատասխանեց Սոնան մի քիչ լը ուղարկունից հետո:

— Յես այդպես ել դիտեյի: Նույնիսկ վերջին բոպեյին, յերբ մնաս բարե ասեցի, դու

կատակ արեցիր և ծաղրեցիր ինձ։ Իհարկն  
չեցիր սիրում։

— Ուրիշ խոսելու բան չկա՞՝, — հարցը նա  
ժպտալով, ապա հանկարծ բացականչեց։

— Հա, ճիշտ վլոր։ Գիտե՞ս ինչու յեմ յե-  
կել քեզ մոտ։ Դու յերևի արդեն լավ ծանոթա-  
ցել ես այս քաղաքին և նրա շրջապատին։ Գը-  
նանք, ինձ ցույց տուր մի քանի հետաքրքիր  
տեղեր։

10

Դուրս յեկանք։

Այստեղից սկսած, նորից սկսվում և մի  
լավ հուշ։ Հուշ այն մասին, թե ի՞նչպես դուրս  
յեկանք տանից և ինչպես մեր վոտքերը մեզ  
տարան քաղաքից դուրս, գեղի այդիները։ Կար  
ծես այդ եր քաղաքի ամենահետաքրքիր տեղը։

Ճանապարհին յես ու Սոնան համարյա  
վոչինչ չեցինք խոսում, — մտածում եյինք։  
Թվում եր, վոր յես դիտեմ, թե ինչ ե մտա-  
ծում նա և նա ել, իր հերթին, դիտե իմ մըտ-  
քի մեջ յեղածը։

— Հոգնեցի, — ասաց նա և նստեց մի ծա-  
ռի տակ։

Յես կանչնած եյի նրա մոտ։

— Նստիր։

Նստեցի։ Դարձյալ լուռ եյինք և դարձյալ  
բվում եր, թե դիտենք միմյանց մտածածը։

Քիչ հետո Սոնան կամաց հարցը եց։

— ...իսկ հիմա չե՞ս սիրում...

Յես լոեցի մի քիչ, ապա մտածեցի հարց։

նել — ի՞նչը չեմ սիրում . — իրքն թե չգիտեմ ին  
չի մասին ե խոսքը : Հետո այդ միտքը թողեցի :  
Տատանվում եյի պատասխանել :

Իսկ քիչ հետո .

— ... Սիրում եմ . . .

Սոնան նայեց ինձ ու ժպտաց : Յես ևս նա-  
յեցի նրան : Նրա աչքերում կարդացի պատաս-  
խանը :

— Ի՞հ, ի՞նչ ենք մուկ ու կատու խաղում,  
Սոնա : Յես զիտեմ, վոր դու ել ինձ նս սի-  
րում : Զուր տանջում ենք իրար, — ասացի ու  
զրկեցի նրան :

Այս տնդամ նա բռլորվին չընդիմացավ . . .

## 11

— Հինգ որ հետո Սոնան դնաց : Այսպիսով  
վերջացավ այդ փոքրիկ պատմությունը :

Հիմա այդ որերից անցել են մի քանի տա-  
րիներ . . .

Յերբ յես գնացի կայարան և նրան ճանա-  
պարհ եյի դնում, վերջին բոպեյին ասացի .

— Սոնա, մենք կամունանանք :

Իսկ նա ինձ պատասխանեց .

— Ո՞վ զիտե վաղն ինչ պատահի : Մարդ  
ի՞նչպես կարող ե զիտենալ : Յեթե այդպիս  
յեղափ, իհարկե, լավ կլինի . . .

Այդպիս չեղավ :

Տարածության հեռավորությունն իրն  
արեց, ժամանակն՝ իրը : Յեմ բացի այդ : Արե-  
վոտ հինգ ցերեկների մեր սերը մի՞թե շլթայի

նման կապել եր մեղ միմյանց։ Այդպես չեր։  
Ենիւ այդ նր պատճառը, վոր յերբ լսեցի  
վոր նա ամուսնացել ե, քոլորովին չգործառ-  
ցա։

Այդ բոլորից մնաց մի լավ հիշատակ...

## 12

Չնայած նրան, վոր անցնում են տարինե-  
րը, յես դարձյալ մնացել եմ նախկինը։ Յես  
հիմա ել այն եմ և իմ մտքի մեջ մըմնջում եմ  
յուրաքանչյուր հանդիպող կոմյերիտականի  
հասցեյին։

— Ի՞նչ ե, դու, կարծում ես, թե յես հասա-  
կավոր ձի՞ յեմ։ Յես այսոր ել կարող եմ մըցել  
քեզ հետ ամեն ինչի մեջ. — ընկերական կա-  
տակների ու ցատկրտոցների, սիրային զրույց-  
ների կամ եքսկուրսիա կազմակերպելու։ Յես  
նի նախկինն եմ, — ելի առաջվա պես յերիտա-  
սարդ։

ԶԵ՞ վոր յերիտասարդ ե հենց այն աշխար-  
հը, վորն իմ շուրջն ե փովում և տարածվում  
ե ավելի հեռու...

---

## ԽՈՐՏԱԿՎԱԾ ՀՂԳԻՆԵՐԻ ՓՈՂՈՑՈՒՄ

### 1

Յես նրան, այդ տասնութ տարեկան աղջկան, հանդիպեցի սրանից ուղիղ մեկ և կես տարի առաջ:

Մի պայծառ և արեւոտ առավոտ եր, յերբ յես վեր կացա անկողնից և շտապեցի գյուղ գնալ: Արդեն կիրակին անցել եր և նորից յերեկուցարթի յեր: Յես մի կոմյերիտական եյի և աշխատում եյի գյուղերում, վորպես կոմյերիտ միության հրահանգիչ: Յուրաքանչյուր շաբաթ յերեկո գալիս եյի քաղաք, տեսնվում եյի ընկերներիս հետ, կիրակի որն անցկացնում եյի քաղաքում, իսկ յերկուշաբթի առավոտյան գյուղ եյի վերադառնում:

Իմ միակ ազատ որս, կիրակին, այնքան շատ եյի ոգտագործել և հոգնել, վոր այդ առավոտյան արթնացա բավական ուշ և շտուպեցի ճանապարհ ընկնել, չուշանալու համար: Բայց յերբ անցա գավկոմի լուսամուտների տակով և լսեցի ներսից յեկող ճայները, մի քանի ըոսքնյով ներս մտա, մի անդամ ևս խոսելու և կատակելու համար ընկերներիս հետ:

Ահա հենց այդ որն եր, վոր տեսա նրան,  
և յեթե չեմ սխալվում, հենց այդ որն ել սի-  
րահարվեցի նրա վրա: Բոլորովին այդպիսի  
մտադրություն չունեցի, յերբ դավիկոմ մանե-  
լիս տեսնալով նրան, — մի անծանոթ դեմք, վոր  
լուսամուտի մոտ կանգնած հերթի յեր սպա-  
սում քարտուղարի մոտ գնալու համար, — մո-  
տեցա և ասացի:

— Բարե ձեղ, ընկեր: Մանոթանանք...

Հավատացնում եմ ձեղ, վոր ուրիշ մաքով  
չասացի այդ խոսքերը: Յես միշտ այդ կերպ  
եմ ծանոթանում տղաների, բնականաբար նաև  
աղջիկների հետ:

— Մենք ծմնոթ ենք իրար, — ասաց նա և  
ծիծաղեց:

Միայն ծիծաղի ժամանակ նկատեցի,  
վոր նրա դեմքը բավական գեղեցիկ եր:

— Մանո՞թ ենք, — ասացի յես զարմանա-  
լով. — յերսվանի՞ց...

— Զե՞ս հիշում, — ասաց նա, կարծես վի-  
րավորվելով, վոր չեմ հիշում իրեն. — մենք  
սովորել ենք միասին մի դասարանում, սրա-  
նից յերկու տարի առաջ:

Ասաց ու ձեռքով շտկեց ճակատի վրա  
թափված մաղերը: Նրա ձեռքն ել նոր գեղեցիկ:

— Ափսոս... չեմ հիշում, — ասացի յես և  
տխրեցի: Բայց չդիտեմ, թե ինչո՞ւ տխրեցի:  
Ճետո դրա համար շատ եյի ծիծաղում ինքս  
ինձ վրա: Դուցե նրա համար տխրեցի, վոր

աղջիկը չեր հավատում ինձ, վոր իրոք, բոլորովին մոռացել եմ իրեն:

Նա նորից ծիծաղեց և այս անդամ նրա ծիծաղը չափազանց չարաճճի յեր ու զվարթ:

— Վոչինչ, յեթե չես հիշում: Իմ անունս Անահիտ ե, իսկ ազգանունս՝ Տեր-Լարապետյան, բայց վորովհետեւ հիմի Տեր չէա, դրա համար ել՝ Կարապետյան:

— Հա՞,—ասացի յես թեթև ծիծաղելով ու, չդիտեմ ինչու, զարմանալով: Իսկ իմ անունս...

— Դիտեմ, — ասաց նա լրացհատելով: — Արամ ե: Արամ Հարությունյան:

— Վո՞րտեղից զիտես...

— Զագսից եմ իմացել, ասաց նա, չդիտեմ քանի յերբորդ անդամ ծիծաղելով:

Յես, իհարկե, չհավատացի, նույնիսկ դեմքիս մի շարժումով արտահայտեցի զարմանքս:

— Ի՞նչ մարդ ես, — վրա բերեց նա. — Եղ ել չես հասկանում: — Դոնե գլխի կընկնեյիր. յեթե մի դասարանում, ենք սովորել, ուրեմն և աղջանունդ...

— Հա՞,— բացականչեցի յես:

Հետո նա սլատմեց, թե ինչպես յես, ինքը և մի ուրիշ ընկերուհի, մի քանի անդամ միասին պատրաստել ենք ուսւերեն դասը, վորն առանձնապես դժվար եր թուրքահայի համար:

Այդ ել չեցի հիշում:

— Ուրեմն դու թուրքահա՞յ ես:

— Այո, թուրքահայ: Ծնողներս մեռել են,  
իսկ յես մենակ եմ և աշխատում եմ ծխախո-  
տի գործարանում: Յեթե ինձ հետ միևնույն  
սենյակում ասլրող բնկերուհուս չհաշվնեք,  
յես բացարձակապես մենակ եմ:

«Բացարձակապես»-ն ինձ դուք չեկավ:  
Ինչո՞ւ բացարձակապես մենակ: Բայց նույն  
ըռպեյին նա նորից գեղեցիկ կերպով ծիծա-  
ղեց և յես մոռացա այդ:

Կուռ կանգնած եյի: Հերթը հասավ նը-  
րան: Մի անգամ ել ծիծաղեց ու մտավ քար-  
տուղարի մոտ: Նոր միայն հիշեցի, վոր ու-  
շացել եմ: Դուքս յեկա փողոց և շտապ թեք-  
վեցի դեպի գյուղ տանող ճանապարհ: Ա-  
րադ քայլելու համար սկսեցի սուլել մի աշ-  
խույժ քայլերգ:

## 2

Ամբողջ ճանապարհին նրա մասին եյի  
մտածում: Լավ աղջիկ եր, ուրախ, գեղեցիկ  
և կարծես ինչ վոր բանով զանազանվում եր  
մյուս աղջիկներից: Ամբողջ ճանապարհին  
այդ «ինչ վոր բան»-ի մասին եյի մտածում,  
բայց չեյի կարողանում ըմբռնել, թէ ի՞նչ  
եր դա: Միայն այսքանն եյի կարողանում  
հասկանալ, վաք նա ել մի պարզ և ընկերա-  
կան աղջիկ եր մյուսների նման, բայց ավե-  
լի յեր գիտակցում իր աղջիկ լինելը, քան  
մյուսները: Յերբ խոսում եյի նրա հետ,

պարզ կերպով ինձ սղաշարել եր այն  
զգացումը, վոք յես խոսում եմ վոչ թիւ ըն-  
կերուհու, այլ աղջկա հետ: Դրա սղատճառն  
ինքն եր: Բայց դուցե յես ևս նրա հետ ընկե-  
րաբար չխոսեցի, այլ այնպես, ինչպես հա-  
ճախ տղան խոսում ե աղջկա հետ, զգալով,  
վոր ինքը տղա յե, իսկ դիմացինն աղջիկ,  
վորին վատ չեր լինի, յեթե համբուրել...

Ուրիշ անդամ գյուղ դնալիս, մենակու-  
թյունից չձանձրանալու համար, յես հասնում  
եյի առջևից դնացող գյուղացիներին և նրանց  
հետ զանազան բաների մասին խոսելով, շա-  
րունակում եյի ճանապարհը: Իսկ յեթե վոչ  
վոք չեր հանդիպում, յես ուրիշ բանով եյի  
զբաղվում: Նայում եյի իմ շուրջը փոխած  
դաշտերին և մտածում եյի:— Այ, այս ար-  
տից սկսած մինչեւ դիմացի սապատավոր սա-  
րը—հսկայական տարածություն ե: Ո՞վ գիտե,  
զուցե մի քանի տասնյակ տարուց հետո այս-  
տեղ մի մեծ քաղաք կանգնի և նրա անոնը  
լինի կոմունաշեն...

Յեկ ամեն անդամ, յերբ անցնում եյի  
ապագա կոմունաշենի մոտով, շարունակ հա-  
մակվում եյի այդ գեղեցիկ հեռապատկերով:

Քանի վոր տարվա այդ թշղանակին գյու-  
ղի ճանապարհի վրա անցորդներ ուշ-ուշ  
եյին հանդիպում, դրա համար ել յես ստիպ-  
ված եյի ավելի և ավելի խորանալ կոմունա-  
շենի հեռապատկերների մեջ և զբաղվել նրան  
ցով: Նույնիսկ բանն այնտեղ հասալ, վոր

յես սկսեցի քաղաքը հատակադեմ և կառուցել փողոցներն ու շենքերը: Կառուցում եյի, քանդում, նորից եյի կառուցում ու քանդում մինչև վոր քաղաքն իր վերջնական ձևն ստանար՝ կոմունիտական հասարակության յուրաքանչյուր անդամին հարմար: Մինչև հիմա ել հավատացած եմ, վոր յեթե մի որ ինձ նշանակեն Կոմունաշենի կառուցման գլխավոր ճարտարապետ՝ չեն սխալի:

Այդ որը ևս, գյուղ տանող ճանապարհի վրա վոչ վոք չեր յերեւում, ուստի և սկսեցի Կոմունաշենի. փողոցներով տրամվայի գիծ անցկացնել: Բայց Սնահիտը յեկել կանդնել եր մտքիս առջև և ինքն իր մասին սլրուագանդ եր մղում: Ել ի՞նչ կարող ես անել...

Սանք դեռ այդ վոչինչ, վոր Կոմունաշենի նման մի հսկայական քաղաք տրամվայ չունեցավ: Յամին այն ե, վոր գյուղի մոտ, ճանապարհին ընկած քարի վրա ըստ սովորականի նստելով, այդ որը չըբազվեցի գործիս վերաբերող խնդիրներով: Սովորություն ունեյի, քաղաքում գտնված ժամանակը, կերպակի յերեկոյան, պատրաստել գյուղերում տանելիք աշխատանքիս առաջիկա շաբաթվածքագիրը, վորը թեև բարեխղճորեն եյի կատարում, բայց մի անդամ ևս աչքի եյի անցկացնում՝ այդ քարի վրա հանդստանալու համար նստելիս:

Քարն արդեն յետե եյի թողել, յերբ ըսթափվեցի և նկատեցի այդ: Ես ջղայնացաւ

Անահիտի վրա, բայց չուզենալով յետ վերա-  
դառնալ, խոսք տվեցի ինձ, վոր աշխատանքի  
ժամանակ բոլորին չեմ մտածելու նրա մա-  
սին:

## 3

Եերբ այդ շաբաթը վերջացավ, նոր մի-  
այն զգացի, վոր վեց որ ասածող քիչ բան չեւ  
Զգացի նաև, վոր պյուղից մինչև քաղաք ձրդ  
վող ճանապարհը բավական յերկար եւ յեղել,  
իսկ յետ միայն նոր եմ նկատում այդ: Այդ  
բանը հատկապես զգացի ճանապարհին, յերբ  
ինձ թվում եր, թե իմ փոխած յուրաքանչյուր  
քայլի փոխարեն քաղաքը հեռանում եւ ինձա-  
նից յերկու քայլ: Հասնելու հույսս կտրվում  
եր արդեն, յերբ մոտեցա տների առաջին շար  
քին: Բայց այդ որը քաղաքը զարմանալիո-  
րեն մեծացել եր, փողոցները յերկարել եյին  
եւեղ հասնել չեր լինում:

Բայց ահա վերջապես մայր մանող արեի  
շողերի տակ յերեացին փոքրիկ սենյակիս պա-  
տուհանի պսպղացող ապակիները: Մոտեցա  
դարպասի դռանը, թակեցի եւ ինչպես ընդ-  
հանրապես, այդպես ել այս անդամ դուրս  
յեկալ հարեւան պառավը և դարբասը բացեց:  
Սովորաբար նա հագած եր լինում աշխար-  
հագրության քարտեզի բոլոր գույներով կար  
կատված մի զդեստ; վորի փոխարեն այդ որը  
հազել եր նոր շորեր:

Մեր սովորական սիրավեր վողջույններից  
հետո ասացի նըան.

— Ծնորհավոր լինի, նոր շորե՞ր ես հապել, տա՛տի...

— Հա, վորդի, թոռս ե կաթել տվել: ինքըն ել մի ամիս արձակուրդ ե առել, եսորեգուց գալու յե:

Նրա թոռն ինչվոր քաղաքում ուսանում եր և այդ տարի ավարտելով, անցել եր ծառայության, իր առաջին վաստակից բաժին հանելով նաև տատին: Մասնակցելով պառավիր ուրախությանը, մտա սենյակս: Արդեն ուշ եր և յես շտապում եյի գնալ ակումբ, տեսնելու ընկերներիս: Բացի գրանից, այդ ժամերը ժողովի ժամեր եյին, ուստի և պետք եր հասնել:

Ինչպես միշտ, այդ որն ել առաջին գործս յեղավ՝ լվացվել, սանրվել, զգեստներս փոշուց մաքրել: Այդ որը հատկապես մէծ ինամքով մազերս սանրեցի և զգեստներիս տվեցի վայելուչ տեսք, Խոսք անգամ չի կարող լինել, վոր այդ որվա հատուկ հոգատարությունս վորեե կապ ուներ Անահիտին հանդիպելու ցանկությանս հնտ: Իհարկե վոչ: Քանի վոր պառավը կարող ե նոր շորեր հաջնել, յերիտասարդն իրավունք չունի՞ մի բան ել ավելին անել: Եեվ շատ հավանական է, վոր հենց պառավի նոր զգեստն եղ, վոր ինձ թելադրեց ավելի խնամքով հարդարել մազերս ու զգեստներս:

Դուքս յելա սենյակից: Մի տեսակ եյի: Այսինքն ի՞նչ տեսակ: Հուղվա՞ծ եյի: Դա այնքան ճիշտ չի լինի: Անհամբե՞ր եյի: Դա ել, յե-

ըեվի սխալ եւ Բայց դարձյալ մի տեսակ արտա-  
կարգ եյի: Յեվ վորովհետև մտքերս շատ հան-  
գիստ եյին, դրա համար ել այդ արտակարդու-  
թյունն սկսեցի վճարել զգացմունքներիս մեջ:  
Մինչև դարպասից դուրս գալս դտա, վոր  
հարցը Անահիտի հետ մի քիչ կապ ունի: Այդ  
որը կարծես մի քիչ շատ եյի մտածում  
նրա մասին: Յեվ ի՞նչ.—Հազիվ եյի ճանապար-  
հի կրտսն անցել, յեր մի անակնկալ դյուտ արե-  
ցի—յես սիրահարված եյի Անահիտի վրա...

Սկսեցի մտածել: Ուրեմն յես գնում եմ  
ակումբ, Անահիտին հանդիպելու համար...  
Բայց ասենք թե հանդիպեցի: Հետո՞... ի՞նչ եմ  
ասելու: Ի՞նքն ինչ ե ասելու: Յենթաղբենք թե  
ասացի, վոր սիրում եմ քեզ, իսկ նա ասաց, թե  
յես ել քեզ եմ սիրում: Դրանի՞ց ինչ... ի՞նչ  
դժվար բան ե առաջին անդամ սիրահարված  
լինելու...

Ինքս ինձ մրա բարկանում եյի: Քո ի՞նչ  
գործն ե սիրահարվել, այն ել միանդամից: Իսկ  
լավ ելինի՞, յեթե բանից դուրս գա, վոր նա  
արդին սիրահարված ե ուրիշի հետ... Ավելի  
լավ ե՝ գնալ, հանդիպել նրան, մի քիչ ել խոսել  
համադումարի աշխատանքների մասին, մի քիչ  
ել ընկերական հարցերի շուրջը և վերջ: Տուն  
վերադառնալիս նոր միայն հիշել, վոր այն, ինչ  
վոր հարկավոր եր, չեմ ասել:

Իսկ յեթե ասե՞մ...

Այդ բոսկեցին մտքերս խզվեցին, վորովհեռ  
տե արդեն ակումբի դռան մոտ եյի հասել:

Մտա ներս: Ժողվն արդեն սկսվել եր:

4

Յերբ ժողովը վերջացավ և մենք դուրս  
յեկանք, յես սկսեցի նրան փնտրել: Նա ժողո-  
վականների մեջ չկար: Փնտրեցի ակումբի բոլոր  
սենյակներում, բայց վոչ մի տեղ չդառա: Ակում-  
բում ուրիշ շատ-շատերը կային, բայց նա  
կարծես անհետացել եր:

Տիրեցի:

Նստեցի պատահած մի աթոսի վրա և սկսե-  
ցի մտածել: Այս մեկը լավ չեղավ: Գուցե նա  
այս միջավայրից կտրված աղջիկ և կարող  
ե ամիսներով ել վոտ չկոխել այստեղ: Ո՞վ  
գիտե:

Մոտեցավ ընկերուհիներից մեկը և նստեց  
կողքիս.

— Ի՞նչո՞ւ յես տխուր...

— Սիրահարված եմ...

Նա սկսեց բարձր ծիծաղել:

— Ի՞նձ վրա յես սիրահարված:

— Զե՞ մի, քեզ վրա: — Անահիտի'...

— Վո՞ր Անահիտի...

— Տեր-կարապետյան. բայց վորովհեռու  
հիմա Տեր չկա, դրա համար ել՝ կարապետ-  
յան...

— Անահիտի'... Վաս չես արել, բայց  
զգուշ, նրա հոգեբանությունն այնքան ել նո-  
րերից չի:

— Աւրեմն ճանաչո՞ւմ ես նրան, — Հարցրի  
յես մեծ հետաքրքրությամբ:

Ընկերուհիս, նկատելով վոր յես կատակ  
չեմ անում և իրոք սիրահարված եմ, լրջա-  
ցավ:

— Այո, ճանաչում եմ: Այսինքն վոչ մի  
այն ճանաչում եմ, ույլե մենք միասին ենք ապ  
րում:

— Մի՞թե: Այ քեզ պատահականություն:

— Այո, — շարունակեց նա: — Անահիտը դի-  
մում երտիվել և անցյալ որն ընդունվեց կոմյե-  
րիտմիության անդամ: Նրա բնավորության-  
մեջ զեռ անհարազատ գծեր կան, բայց վոչինչ:  
կամաց-կամաց կուղղվի...

Ընկերուհիս վեր կացավ դնալու, սպառ-  
նալով, վոր իմ անհամարձակության դեպքում  
ինքը կասի նրան սիրահարությանս մասին...

— Բայց, Արամ, ավելացրեց նա, պատ-  
րաստվելով դուրս դնալ, — յեթե չես սիրում,  
այլ ուզում ես ժամանակ անցկացնել, լավ չես  
անում...

Վիրավորվեցի:

— Ժամանակ անցկացնե՞լ: Յե՞ս...

Նա կատակ եր անում: Նա իհարկե դիտեր,  
վոր յես այդպիսի բան չեյի անի:

Վեր կացա և դնացի տուն: Յեվ խախտելով  
սիրահարության բոլոր կանոնները, հանդգնե-  
ցի այդ դիշեր սովորականի սրբս կուշտ ու կուռ  
քնել...

Գուցե յես անշնորհք կերպով եմ պատմում  
այս բոլորը։ Կամ գուցե պատմում եմ վոչ  
այնպես, ինչպես ակետքն ե։ Այնաեղ, վորտեղ  
պետք է հուզվել, չեմ հուզվում և ընդհակառ  
ուկը։ Բայց դա իմ մեղքը չի, վոչ ել մի ուրիշ  
շինը։ Եերբ այն տիսուր լուրն իմացա, վորի  
մասին ակտի պատմեմ մի քիչ հետո, նույնիսկ  
ժամանակ չունեցա տիսելու։ Դեպքերի բեր-  
մամբ, ճիշտ այդ որը խրճիթում կազմակերպել  
եյինք ծիծաղի յերեկո և յես հանձն եյի առել  
մասնակցել այդ յերեկոյին մի ուրախ դերում։  
Ասացեք հիմի, յես մեղավո՞ր եմ, կամ ո՞վ ե  
մեղավոր...

Յերբ յես մի որ հանդիպեցի իմ մի ընկե-  
րոջս և ամեն ինչ պատմեցի նրան, նա կատակի  
տեղ ընդունեց այդ բոլորը և ասաց, վոր յես  
սիրել չգիտեմ։ Հետո մի քանի ուրիշներն ել  
ինձ նույն բանն ասացին։

Բայց, միթե իրո՞ք յես սիրել չգիտեմ։  
Վոչ, իհարկե վոչ։ Յես սիրել գիտեյի և սի-  
րում եյի նրան։ Շատ եյի սիրում։

Յերբ դեռ անցյալում, քաղաքում աշխա-  
տածս ժամանակ, ամեն յերեկո վերադառնում  
եյի տուն, իմ համեստ սենյակս դիմավորում  
եր ինձ իր սվորական մենակությամբ։ Բաց  
եյի անում դուռը և մտնում եյի ներս։ Կար-  
դում եյի մի քիչ, հետո՝ գրում, ապա պառ-

կում եյի մահճակալների վրա և սկսում եյի  
մտածել:

Յերեկոն իջնում ե: Այստեղ միայն յես եմ  
և այս փոքրիկ սենյակը: Վորքան լավ կլիներ,  
յեթե նա այստեղ լիներ...

Նույնիսկ այն ժամանել, յերբ դեռ չեյի  
տեսել Անահիտին, դարձյալ ցանկանում եյի,  
վոր նա լիներ ինձ մոտ: Չդիտեյի, թե հատկա  
պես ով ե այդ նա-ն: Միայն այնքանը դիտեյի,  
վոր նա աղջիկ ե, դուցե և կոմյերիտուհի, և  
ուրիշ վոչինչ: Իսկ յերբ Անահիտին տեսա,  
խելույն զգացի, վոր ու ճիշտ և ճիշտ նա յե,  
վորին յես ցանկացել եմ իմ մենակության ըստ  
պեներին:

Սենյակ ներս մտնելիս ինձ թվում եր, թե  
նա պիտի բաց աներ դուռը և ժպտար...

— Բարե, Արամ, ինչո՞ւ ուշացար:

— Բարե, սիրելիս: Կէնտրոնից մարդ եր  
յեկել... Յեվ այլն:

Իսկ առավոտյան նորից դուրս պիտի  
գայինք տանից և գնայինք մեր աշխատավայ-  
րերը:

Յերեկոյան պիտի նստեյինք լուսամուտի  
մոտ և նայեյինք դուրս, յերկնքին:

— Անահիտ, տեսնո՞ւմ ես Մարսը...

Այսպես պիտի լիներ և յես ինձ մենակ  
չպիտի զգայի այդ փոքրիկ սենյակում:

Բացի մենակության զգացմունքից, ինձ  
պաշարել եր նաև մի նոր, դեռ մինչեւ այդ ան-  
ծանոթ զգացում: Զգում եյի ինչ վոր տաք

Հոսանքի շարժվելը յերակներիս մեջ, աչքերս  
սկսում եյին տաքանալ, թեերս ձգվում եյին  
տուած, մեկին դրկելու, համբուրելու համար,  
սեղմելու կըծքիս և շնչալու, վօր նա լավ  
աղջիկ ե և յես նրան սիրում եմ...

Մի անգամ, յերբ ակումբից դուրս եյինք  
յիկել և բազի տուն եյի ուղեկցում՝ քաղաքի  
ծայրում ապրող ընկերուհիներից մեկին,  
կանգ տուա ճանապարհին և ասացի.

— Դու գեղեցիկ աղջիկ ես...

Նա ծիծաղեց և ուզեց շարունակել ճանա-  
պարհը: Յես դրկեցի նրան: Նա դուրս պրծուի  
թերւ և միջից և նայեց ինձ.

— Առ ոթ չե՞ , Արամ...

Յես դլուկ կախեցի...

— Լավ, հաշովենք, միայն թե խոսք տուր,  
վոր այլնս չես անի:

Յես խոսք տվեցի: Յերբ մոտեցանք իրենց  
դուանը, նա ասաց.

— Արամ, լավ կանես, յէթե ամուսնանաս

## 6

Մի անգամ դյուղում յեղած ժամանակս  
հիվանդացա և ստիպվեցի յերեք շաբաթով քա-  
ղաք չգնալ: Պառկել եյի կոմյերիտականներից  
մեկի տանը և միայն լրազրերով եյի կասրված  
քաղաքի հետ: Իսկ յերբ յերեք շաբաթը լրա-  
ցավ, յես վեր կացա արդեն առողջացած և ու-  
ղեվորվեցի քաղաք: Իմ հիվանդանալուց հետո  
տուածին անգամ դնացի ակումբ: Ընկերներս,

վոր արդեն լսել եյին հիվանդությանս մասին և  
մի քանիսն ել տեսնելու եյին յեկել ինձ զեռ  
պյուղում, հավաքվեցին և մենք բաց արինք  
մի տաք խոսակցություն: Յես շատ նորու-  
թյուններ եյի լսում, վորոնք պյուղ չեյին հա-  
սել:

Խոսակցության ժամանակ հանկարծ նկա-  
տեցի, վոր Անահիտը մենակ կանգնած է լուսա-  
մուտի մոտ և խռովիան յերեխայի նման, ցու-  
ցամատը կրծելով, նայում է մեզ: Ինչո՞ւ չի  
մոտենում:

Բարեկցի:

Նա բարեկց բավական սառը և շարունակեց  
այդպիս մնալ: Իսկ յերբ ընկերներն ու ընկե-  
րուհիները ցըլեցին ամեն մեկը մի կողմ և յես  
մնացի մենակ, Անահիտը նոր միայն մոտեցավ  
ինձ և յես տեսա, վոր նրա գնմքը սովորականի  
պես զվարթ եր:

— Արամ, — ասաց նա ժպտալով, — Հիմա  
կարելի՞ յե քեզ հետ խոսել:

— Իսկ մի՞թե յերբեկցն չեր կարելի, —  
զարմացա յես:

— Ե՛կ, — ասաց նա սրտնեղելով. — յես  
այդ չեմ ասում: Հիմա կարելի յե՞ մի քիչ յեր-  
կար խոսել քեզ հետ:

— Ինչքան վոր ուզում ես, — ասացի յես և  
ժպտացի: Հիվանդությունից հետո Անահիտն  
ինձ ավելի յեր դուր գալիս:

Յերբ նա լսեց իմ համաձայնությունը, վեր  
կացավ և առաջարկեց այդի գնալ: Ճանապար-

Հեն յերկուսս ել յուռ Եյինք։ Հասանք և նստեացինք մի նստարանի վրա։

— Իսկ ի՞նչ ե անում Աստղիկը, — հարցրեցի յես իր ընկերուհու մասին։

— Նա ասում ե, վոր դու ինձ սիրում ես, — ասաց նա, շրթունքներն այնպես ծռմռելով, կարծես հանդիմանում եր նրան։

— Հա՞՝ ասացի յես և միայն այդքանը։ Յերեք շաբաթվա հիվանդությունիցո հետո թեև այժմ ավելի շատ եյի սիրում նրան, բայց չեյի կարծում, թե այդքան շուտ պիտի տեղի ունենար այդ խոսակցությունը։

Անահիտն ավելացրեց.

— Ստախոսը… իզուր բամբասում ե…

— Զե ,ինչո՞ւ, — վրա բերեցի յես. — Աստղիկը սուտ չի խոսի։ Յեթե ասել ե, ուրեմն ճիշտ ե ասել։ Ո՞վ դիտե…

— Ուրեմն դու ինձ սիրո՞ւմ ես…

— Դե , Աստղիկը սուտ չեր ասի…

Անահիտը ծիծաղեց.

— Ասա, ելի…

— Սիրում եմ, Անահիտ։

Այս խոսքիս վրա նա նորից ծիծաղեց և մոտեցավ ինձ։

— Իսկ յեթե չե՞ս սիրում…

— Ախր ի՞նչպես։ Զե՞ վոր սիրում եմ։

— Դե ուրեմն համբուրիր, վոր հավատամ։

Ինչո՞ւ չե։ Դա լիովին թույլատրելի յե, մանավանդ, վոր նա ուզում ե հավատալ։ Յեվ

Հնայտն այն բանին, վոր մեզ կարող եյին նկատել, այնուամենայնիվ յես համբուրեցի նրան։  
Իսկ այդ դիշեր, իրոք վոր չքննցի ոլատառ հածի տպավորության տակ...

7

Առաջին անգամ յես նրա մեջ տարորինակ զծեր տեսա դարնան կեսերին։ Շոտ տարորինակ և անբացատրելի։ Սկզբում վոչինչ չհառկացա:

Ամեն տարվա նման, այդ անգամ ել գավկոմը կանչեց մոտ հարյուր կոմյերիտականների և ցանկացող անկուսակցական յերիտասարդների, ակումբի անդամներից, մի քանի որով դյուզ ուղարկելու համար։ Պետք և անցկացնեյինք բերքի տոնը։ Յուրաքանչյուր խմբի մեջ կար մի զեկուցող։ մյուսները մասնակցելու եյին տրվելիք ներկայացումներին և աղետդատերին։

Առավոտյան ժամը 8-ն եր։

Գավկոմի դռանը հավաքված, մենք դյուզերի համար խմբեր եյինք կազմում, վիճում, նորից կազմում և յերբ վերջապես մի խումբ սպատրաստ եր լինում, իսկույն նստում էր իրեն հատկացված Փուրդոնը։

— Դու ո՞ւր ես զնում, — հարցրեց մեկն Անահիտին, վոր նույնապես այլտեղ եր։

— Դեռ չգիտեմ։

Այդ ժամանակ Փուրդոններից մեկի միջից բղավեցին.

— Յեկ այստեղ, Անահիտ. աստվածավախ  
պահապավի դերը տանելու համար ոկտօք կղաս,  
ուրիշ աղջիկ չկա հետներս:

Իես ուրախացա: Նա ել և գյուղ գնալու և  
նույնիսկ պառավի ծիծաղաշարժ դերն և տանե-  
լու: Ի հարկե լավ կխաղա:

— Դա լավ յեղավ, —ուրախ բացականչեցի  
յես:

Անահիտը, չըխտեմ ինչու, զարմացած նա-  
յեց ինձ.

— Վոչ, յես ձեր խմբի հետ եմ գալու, —ա-  
սաց նա կամակորությամբ:

Մնանցից մեկը բղավեց.

— Մեր խումբը լրիվ ե, նեղություն մի  
քաշիր...

Այդ ըովեյին գավկոմի քարտուղարը  
կանքնելով վատնեցի ծայրերի վրա, բղավեց.

— Մե՛կ, յերկո՞ւ, յերե՞ք...

Յեկ բոլոր ֆուրգոնները միանդամից շարժ-  
վեցին դեպի զանազան կողմեր:

Վերադառնալուց հետո միայն իմացա, վոր  
Անահիտը գյուղ չեր գնացել:

Այդ դեպքից հետո նա ինձ հետ բավական  
սառն եր վարվում և նույնիսկ մի անդամ ել  
լաց յեղավ, վոր յես իրին չեմ սիրում:

Վո՞րտեղից եր այդ բանն իր խելքի մեջ  
մտել՝ չըխտեմ:

Եերկը որդ անդամ, —ոչա վերջին անդամն  
եր, —այսպիս պատահեց: —

Դարձյու շաբաթ յերեկո յեր, դարձյալ

յես կքաղաք եյի յեկել և ակումբում դասախոս-  
ուություն կար: Վերջանալուց հետո, Անահիտը  
մոտեցավ ինձ:

— Գնանք, Արամ ջան:

— Եետ ճանապարհ եմ գյելու ընկերուհի-  
ներից մեկին, վորը շատ հեռու յե ապրում:  
Արդեն խոսք եմ տվել: Եեթե ուզում ես, դո-  
ել յեկ, հետո միասին կվերադառնանք, —ասացի  
յես:

— Վոչ, չեմ ուզում, —ասաց նա և վիրա-  
վորված հեռացավ:

Հետեւյալ որը սենյակումս նստած եյի:  
Նախկին անպաճույժ սենյակս, շնորհիվ Անա-  
հիտի մի քանի այցելության, շատ եր գեղեց-  
կացել: Ամեն ինչ իր տեղին նր դրված, ճաշակով  
ու խնամքով: Անահիտն իհարկե լավ աղջիկ  
եր, միայն թե, անհասկանալի բաներ շատ  
ուներ...

Դուռը բացվեց և նա մտավ ներս:

— Անահիտ, քո մասին եյի մտածում, —  
ասացի յես ժպտալով:

Նա մոտեցավ լուռ և անժպիտ:

— Դու ինձ այլևս չե՞ս սիրում, —շնչաց-  
նեմ:

— Ո՞վ ասաց:

— Ո՞ւր եյիր դնում դիշերով այն աղջկա-  
հետ...

Եետ պատմեցի ամեն ինչ: Ամոթ չե՞ս կաս-  
կածել: Նա իմ ընկերուհիս եւ Անահիտն ե այն:

Խաղջիկը, վորին սիրում են: Միա՞կը... ի  
հարիւ միակը:

Նա չհավատաց:

— Իսկ խոսք տալի՞ս ես, վոր այսուհետե  
բոլոր կապերդ կիզես նրա հետ:

— Ընկերակա՞ն կապերս...

— Այո, նույնիսկ ընկերական: Յես չեմ  
ուզում քեզ նրա հետ տեսնել: Խոսք տալի՞ս  
ես, Արամ ջան...

Բարկացա:

— Վոչ, չեմ տալիս:

Այս խոսքի վրա Անահիտը լուռ վեր կա-  
ցավ և գնաց դնալի դուռը, կանգնեց մի քիչ,  
ապա առանց յետ նայելու դուրս յելավ...

## 8

Յերեք ամիս շարունակ քաղաք չգնացի:  
Դրսի հետ կապված եյի լրագրերով ու դավ-  
կոմից յեկող հրահանգներով: Անահիտի մա-  
սին յերկու անգամ լսեցի: Առաջին անգամ լսե-  
ցի, վոր նա ամուսնացել ե: Մի տղա, անկու-  
սակցական, ծանոթացել ե նրա հետ և մի շա-  
բաթից հետո նրանք ամուսնացել են: Ամու-  
սինը նրան շատ ե սիրլ: Անահիտը պարծենա-  
լով ե պատմել, թե նա իր պատճառով ծննծել  
ե յերեք տղայի և ապտակել յերկուսին: Այդքան  
սիրել ե նա Անահիտին:

Մի անգամ ել այն խմացա, վոր նա դադա-  
րել ե բջջի հետ կապ ունենալ, դրա համար ել  
նրան հեռացրել են կոմյերիտմիությունից:

Այսպիսով ամեն ինչ վերջացավ...

Գնաս բարով, սիրելի Անահիտ: Իսկ յես  
պիտք եղիմացի գյուղը հասնեմ...

9

Գյուղի ճանապարհով ավավում ե հովը:  
Ի՞նչ գեղեցիկ են դաշտերը: Քայլում եմ ճա-  
նապարհով.—յերկար ե ճանապարհը: Այս ի՞նչ  
թախիծ ե նստել սրտիո մեջ: Այս ո՞ւմ մասին  
եմ մտածում...

Դիմացի արտի մեջ վորքակն տուղտ կա:  
Նրանց դեղին բաժակաթերթերն արեի պես  
պայծառ են յերկար ցողունների վրա: Ի՞նչ  
արտ ե դա:

Դա կոմունաշենի Խորտակված Հոդի-  
ների Փողոցն ե, այն հոդիների, վորոնք կա-  
րող ելին նոր աշխարհինը լինել, բայց յեղան  
հնինը: Յես ինքս եմ այսպես անվանել այդ  
փողոցը...

Գրանումո մի նկար կա, —մի լուսանկար:  
Հանում եմ և նայում: Անահիտն ե: Ափսոս,  
ափսոս նա...

Քամին շնկչնկում ե, տուղտերն որորվում  
են: Յես այստեղ քեզ համար հուշարձան կկա-  
ռուցեմ, Անահիտ...

Յես քեզ շատ եյի սիրում: Գու մեռել ես  
այժմ ինձ համար, բայց քո հիշատակն եմ սի-  
րում հիմա ել: Իսկ կոմունաշենի բնակիչները  
թող իմանան, յերբ կանցնեն քո հուշարձանի  
մոտով, վոր թեև յես քեզ այնքան շատ եյի

սիրում, այնուամենայնիվ քո հուշարձանը  
կառուցեցի Խորտակված Հոդիների Փողո-  
ցում, ուր առայժմ արտ և ցանված և ուր որոր-  
վում են վսոկեղեղին առւղտերը...

---

## ԱՐՄԱՆԻՆ ՓՈՐՁԸ

### 1

Արտաշը շուռ ու մուռ յեկավ անկողնի  
մեջ, հորջանեց մի յերկու անդամ և վորոշեց  
նորից քնել: Բայց շշակի ծայնը խանգարում  
եր նրան: Հանկարծ սթափվեց և լսելով շշակի  
վերջին ճիչը, վեր թռավ անկողնից:

Լուսացել եր:

Այդ որը նա շատ եր քնել:

Նրա փոքրիկ սենյակը, բանվորական հան-  
րակացարանում, նման եր այն բազմաթիվ  
սենյակներին, վորտեղ ապրում եյին ամուրի  
բանվորները: Մի բան, վորը տարբերում եր  
Արտաշի սենյակը մյուս ընկերների սենյակնե-  
րից—դա ծայր աստիճան խառնիխուռն և ան-  
կանոն դրությունն եր:

Խտոնիխուռն և անկանոն:

Բայց, բնորոշելու համար այսքանը բավա-  
կան չէ:

Փոքրիկ սեղանի վրա, թանաքամանի  
կողքին, դրված եր կոշկաներկի տուփիը՝ խռզա-  
նակի և այլ պարագաների հետ միասին: Նրա  
կողքին դրված եյին Արտաշի դուլպաներն ու  
դոտին: Գետնին, անկողնի մոտ, դրված եր  
ջրամանը, վորի խուփիը՝ քաղցրագիտության

դասագիրքն եր: Յերբ այդ գիրքը պետք դար,  
նա կվերցներ, փոխարենը մի ուրիշ գիրք դնեա-  
լով:

Պատի վրա փակցված էյին Լենինի և մի  
ռուս գրողի նկարները, մի տեսարան Մոսկ-  
վայից, ինչվոր կինո-պլակատ, պատկերազարդ  
մի աֆիշա և Կարմիր բանակի մուտքը Խար-  
կով:

Այդ առաջնութ, վորովհետեւ ուշ եր վեր-  
կացել, նա շտապեց խոկոյն հազնվել:

Հանկարծ աչքն ընկալ կտրված կոճակի  
տեղին՝ շապկի վրա:

— Վոչինչ, — մըթմըթաց նա:

Ու անցյալ որվա պես, մյուս որվա պես,  
ավելացրեց:

— Վաղը կկարեմ:

Ասլա, հազնելով մնացած շորերն ու կո-  
չիները, նա դուրս վագեց:

Հեռվում յերեաց գործարանը, յերեացին  
բանվորներ, վորոնք գնում եյին դեպի այն  
կողմ:

Յերբ Արտաշը մոտեցավ, փչեց յերկրորդ  
շշակը:

Բանվորները ներս մտան:

Այն բանվորները, վորոնք աշխատում ե-  
լին բամբակաղտիչ մասում, իրենց քթերի վրա  
ամբացրին հատուկ պահպանիչներ, բամբակի  
փոշին ներս չշնչելու համար:

Մյուսներն ել հազնելով խալաթները,  
մտան իրենց գործատեղերը:

Արտաշն ևս, հազնելով խալաթը, դնաց  
ներս և կանգնեց դաղդյահի մոտ:

Աշխատանքային որն սկսվեց:

— Վորտե՞ղ և Ոհանյանը, — հարցրեց մի  
յերիտասարդ, ըստ յերեռւյթին՝ բանվորներին  
ստուգողն ու ցուցակադրողը:

— Վո՞րտեղ և, — կրկնեց մի ուրիշ բան-  
վոր:

— Եսոր յերկուշաբթի յե, — Հիշեցրեց մի  
ուրիշը:

Յերիտասարդը լոեց:

Պարզ ե՞ր:

Ոհանյանը և ելի մի քանի բանվորներ,  
յուրաքանչյուր կիրակի հարբում եյին, դրա  
համար ել յերկուշաբթի որերը գալիս եյին շատ  
ուշ՝ կամ բոլորվին չեյին գալիս աշխատան-  
քի:

Կռմ յերիտական բանվորներից մեկը գլուխն  
որորեց:

— Վոչ ու փուչն իբեն կփչացնի:

— Եղքան ել խմել կլինի՞:

Ներքին հարկից լավում եյին դինամո-մե-  
քենաների գոռոցները, իսկ վերեռում փոկերն  
եյին շարժվում, մեկ սկսվալով և մեկ ել  
շրիացնելով: Լսվում եյին նաև դաղդյահների  
չխչխկոցները:

Ցուրաքանչյուրն իր գործով եր զբաղված  
և հազիվ եր նկատում, վոր ժամանակն անց-  
նում ե:

Քեռի Վասիլը հաղաց.

— Հըմ...

Դա նշանակում եր, վոր նա պիտի խոսի:

— Հըմ... Հըմ...

Մեքենաները չխչվելում եյին:

— Բոստավլում, տառչորս թվին, մի շունչանվորդի իվան կար: Իբրահիմ եյինք աշխատում: Եղ անաստվածն ոմեն յերկուշարթի զավող չեր դալի: Մի որ ել...

— Վարդես, —բողոքեց Վարդեսը, —ախքաշխատում ենք, մնա, հանգստի ժամին կտամամես:

— Լավ, դե դու ել... Ձվից նոր յելած... Տասնհինգ տարի յե աշխատում եմ, դակոնք չդիտե՞մ...

— Ախք չես թողնում աշխատենք:

— Լավ, Վասիլը կարճ կկապի, —պատառիսնեց Սեղբակ անունով մի յերիտասարդ բանդոր, վոր տրամադրված եր լսելու:

Վասիլը շարունակեց:

— Հըմ...

— Հետո:

— Հա՛, մի որ ել, վերատեսուչն եկավ թհ՝ ա՛յ իվան, մինչև հիմի ոռճիկիցդ յետ եյի պահում, վոր խրատվես, չեր լինում: Հիմի ովիտի ատեմ, վոր յեթե մի անգամ ել բացակայեցիր, դուքս կանեմ: Ես իվանը մի յերեկու-յերեք շարաթ չբացակայեց: Մի որ ել, — ելի յերկուշարթի յեր, —յեկավ ու իր գործի վրա կանգնեց: Յերկու-յերեք ժամ անցավ-չանցավ, մեկ ել ես իվանը՝

— Վասագուլի, վագարողկի,

Վիտուլա պետրուշկա...

Բանվորները ծիծաղեցին:

— Բռավո, յերդել ել զիտես, Վասիլ:

— Կացեք վերջացնեմ: Հըմ: Դու մի ասիլ՝  
ես մարդը հետն ողի յե բերել, հենց գործարա-  
նումն ել խմել ե: Մեկ, յերկուս, յերեք, — չե-  
զալ: Մի որ ել, ելի վերատեսուչը մոտեցավ  
թե՝ չնեղանաս, իվան, զավող մտնելիս քեզ  
պիտի խուզարկենք:

Եղակես ել արին:

— Իսկ ինքը թողնո՞ւմ եր, վոր խուզար-  
կեն:

— Հա՛յ-հա՛յ... Ի՞նքը... Առաջ խո չե՞մ  
ասում, վոր սատանա մարդ եր:

Արտաշը տաքացավ:

— Վարպետ Վասիլ, թող աշխատենք: Ու-  
զում նս տեղկոմին ասե՞մ: Են միշացած Գյոր-  
դուն վոնդելուց հետո, մի յերկու ամիս լավ  
եր, իսկ հիմի նորից:

Մի քանիսը համոզվեցին:

— Ճիշտ ե, մնա, հանգստի ժամին կշա-  
րունակես:

— Հըմ:

— Ի՞նչ:

— Մի որ ել տեսանք, ես անիծվածն եյի  
հարբել ե, ելի՝

Վասագուլի, վագարողկի,

Վիտուլա պետրուշկա...

— Խուզարկելուց հետո՞ յեր հարբել:  
— Բա՞ս...

Մի քանիոը զարմանքից գործերը թողեցին  
ու դարձան դեպի վասիլը:

— Վո՞նց թե...

— Դու մի ասի, սրան մոր խուզարկում են,  
սա ել ողի չի բերում իր հետ: Մի վոքրիկ ա-  
ման թունդ սպիրտ ե բերում, հետո խառնում ե  
ջրի հետ ու...

— Վայ...

Բոլորը ըրջվեցին դեպի ճիշը:

— Վայ...

Բանվորները վաղեցին: Մեկը կանգնացրեց  
վոկերը:

Սեղրակի թեր մնացել եր մեքենայի տակ:

— Տեսա՞ք, յես չասի՞ թողեք աշխա-  
տենք:

— Յեղա՞վ...

— Շուտ, ջուր հասցըեք...

Սեղրակն ուշաթափ եր:

Արագ ներս մտավ գործարանի վարիչը,  
Հավաքվեցին մյուս բաժանմունքների բանվոր-  
ները և քիչ հետո Սեղրակին տարան:

Յերբ նրան տանող բանվորները վերադար-  
ձան, մնացածները հարցըին.

— Վո՞նց յեղավ...

— Վնաս չունի, թեթև քերծվել ե, մի  
շարաթից կլավանա:

Բոլորն ազատ շունչ քաշեցին.

Կոմյերիտական վարդպեսը ջղայնացած։  
Եթէ Նա, քթի տակի ինքնիրեն մի քիչ խոսելուց  
հետո, չհամբերեց և ձայնը բարձրացրեց։

— Յեղբայր, յե՞րբ պետք ե մեր գործա-  
րանն աղատները փնթիությունից ու ժոմավառ-  
ճառությունից։ Դժբախտ դեպքերն ել կշատա-  
նան, արտադրողականությունն ել կիջնի...

— Ճիշտ ե, — ավելացրեց Արտաշը։  
Լոեցին։

Նորից դինամո-մեքենաների զզրդոցը ներ-  
քեվի հարկից, նորից փոկերի պարն ու շրմոցը  
և նորից մեքենաների չխչխիոցները։

## 2

Դործարանի վարչությունը և բոլոր բան-  
վորները հուզված եյին։ Հանդստի ժամին լու-  
րը տարածվել եր բոլոր բաժանմունքներում։  
Պարզվել եր, վոր Սեղբակը, ուշադրություն  
դարձնելով Վասիլի պատմածներին, անզգու-  
շությամբ թեր գրել եր ատամնավոր անիվի  
վրա, վորից և առաջ եր յեկել դեպքը։

Այդ առթիվ, բանթողից հետո, նշանակ-  
ված եր դործարանի բանվորների ժողով։

Որը մոտենում եր բանթողին։

Մի քիչ անց, չչակը ճչաց և աշխատանքը  
կանգ առավ։

Բանվորները դուրս յեկան բաժանմունքնե-  
րից և շտապեցին ակումբ, վորը դունչում եր

զործարանից վոչ հեռու, հանրակացարտնների  
մոտ:

Բանվորներից մեկը կատակի տվեց.

— Խեղճ տղա... Ախը սիրահարված եք:  
Հիմա վո՞նց պիտի անի: Մի շարաթ չի հան-  
դիպելու իր աղջկան:

— Ո՞ւմ հետ եր սիրահարված:

— Չես ճանաչի:

Յերբ բոլորը հավաքվեցին, տեղկոմի քար-  
տուղարը ժողովը բաց արեց.

— Ընկերներ: Գործարանում գժբախտ  
դեղքերը դեռ չեն վերջացել, դեռ շարունակ-  
վում են: Հիմա, դուք ինքներդ և մենք բո-  
լորս, միացյալ ուժերով պետք եւ զոննենք պատ-  
ճառները և վերջ տանք...

Տեղկոմի քարտուղարից հետո խոսք առավ  
Արտաշն ու նկարադուց գեղքը:

— Վասիլն ել և մեղավոր, Սեղբակն ել, —  
յեղբակացրեց նա:

— Ախալ ե:

— Ճիշտ ե:

— Լոռւթյուն: Հերթով խոսեցեք:

Այս անդամ խոսեց Վերդինեն, վորն ապ-  
րում եր Արտաշի ահնյակին կից սենյակում,  
նույնպես ամուրի յեր և աշխատում եր զոր-  
ծարանի բաժանմունքներից մեկում: Նա նույն-  
պես մեղավոր համարեց, թե Վասիլին, թե  
Սեղբակին:

— Յեթե նա իր զործին մնար և զործի

ժամանակ չդրագվեր ուրիշի պատմությունները լսելով՝ եղախսի բան չեր պատահի:

Հետո խոսեց մի կուտակցական, հատկապիս Վասիլի գեմ: Նրանից հետո ձայն խնդրեց «Տե-ժե» Սաշիկը: Նրա մասին բանվորները պատմում եյին, վրբ նա միշտ Մոսկվայից, «Տե-ժե» տրեստից, ստանում եք դուխի, սուռդրա, մաղերի ոծանելիք և այլն, և այլն: Յուրաքանչյուր տմիս, յերկու անդամ, նամակաբերը դալիս եր գործարան և բղավում.

— Սաշա Հովհաննիսյան...

— Ելի «Տե-ժե» յես ստացել, — ծիծաղում եյին բանվորները:

Դրա համար ել նրա ոնունը դրել եյին «Տե-ժե» Սաշիկ:

Աւրիշ ոծականներ ել ուներ. — «մեշտոն», «ինակէլիցինա», «զարսն բանվոր», «կհս-աղջիկ» և այլն: Ընդհանրապես բանվորները չեցին սիրում այդ տարորինակ բանվորին:

Նա մեղաղքեց ամբողջ բանվարությանը: Բոլորն ել միանման անկարգապահ են:

— Մեկդ մյուսից պահաս չե, — յեզրակացրեց նա:

— Զայնդ կտրի! ...

Հետագա խոսողները դուքս յեկան «Տե-ժե»-յի դեմ: Մեկը նույնիսկ ասաց.

— Հետաքրքիրն այն ե, վրբ միայն Սաշան և մեղաղը ամբողջ, բանվորությանը: Նա վոչ-բանվորական տարը, և, հողերանորեն մեղ

խորթ, կտրված և այդ և պատճառը, վոր սը  
խալվում ե:

Վերջին խոսողը յեղավ մի բանվոր, դուրս  
ցցված աչքերով և քերծված քթով, — յերեխ  
կուլից հետո մնացած: Նա բոլորին ծանոթ  
խուլիզան Գեղամն եր:

Մի քանի բանվորներ ընդահատեցին նրա  
խոսքը, վոր հայհոյանքից բացի վոշինչ չեր  
պարունակում:

Սկսվեցին առաջարկները: Բոլորը դատա-  
պարտում եին և՛ Վասիլին, և՛ Սեղբակին:

Ժողովը վորոշում հանեց:

Վորոշվեց ամենակտրուկ միջոցներ ձեռք  
առնել, վորապեսզի այդպիսի դեպքեր այլև  
չկրկնվեն: Նաև նկատողություն արեցին Վա-  
սիլին:

Բոլորը վեր կացան և խոսելով դուրս յե-  
կան ակումբից:

Արտաշը գնում եր մի քանի ընկերների  
հետ: Քիչ հետո նրանք միմյանց ցտեսություն  
ասեցին և գնացին իրենց տները: Արտաշն  
ել զնաց դեպի բանվորական շենքը, վորտեղ  
իր բնակարանն եր:

Ճանապարհին հանդիպեց Վերգինելին:

— Տո՞ւ ես գնում...

— Հա: Դու ե՞լ:

— Յես ել:

Նրանք ճանապարհը շարունակեցին միասին, խոսելով որմա դեպքի մասին:

Յերբ հասան իրենց դժութը և յուրաքանչյուրն իր սենյակը պիտի մտներ, Արտաշը կանոնեց մի բռպե և ասաց Վերդինելին:

— Ի՞նչ սիրուն խոպօպներ ունես...

Վերդինեն մի քիչ կարմրեց, ապա ծիծառելով մասպ ներս:

Արտաշն առաջին անգամն եր աղջկա հետ խոսում այդպիսի նյութի մասին:

Իսկապես վոր, դեղեցիկ, լավ աղջիկ և Վերդինեն, բայց հատկապես այսոր, ինչքա՞ն գեղեցիկ եր նա...

Արտաշը մտավ իր սենյակը, պառկեց մտհաճակալի վրա, ջրամանի վրայից վերցրեց գիրքը և բաց արեց:

### 3

Մի քանի որ հետո, Արտաշը նստած եր ակումբի հանգստի սենյակում: Այնտեղ եյին նաև վարպետ Սերդոն, Վարդդեսը, Արշակը և ելի ուրիշները:

Խոսք բացվեց Սեղբակի մասին:

— Յես յերեկ նրա մոտ եյի, — հայտնեց մի բանվոր: — Կամաց-կամաց լավանում ե: Վաղը չե մյուս որը դուրս կղա հիվանդանոցից, բայց աշխատել կարող ե միայն մի ամսից հետո:

— Իսկապես, մի բան ընկապ միտքս, — հարցրեց մեկը. — Սեղբակը սիրահարված ե:

— Ասում են :

— Ի՞նչ սիրահարվել, խաղ և անում :

— Եղ շան վորդին, — լեզուն չմփացնելով  
խոսեց Գեղամը, — կատարյալ Դռն-Փուժան ներ:  
Արական մեկի հետ և լինում : Յես բոլորն ել  
գիտեմ . . .

— Անցած ամսին, — շաբունակեց մի ու-  
րիշը, — Սեղբակը յեկավ, թե՝ յես սիրահարվել  
եմ Սիրուշի վրա : Ասում եմ՝ բա Սեղա՞ն, նա  
թե՝ ե՛, են հնացավ . . .

Ծիծաղեցին :

— Սատանան . . .

Ու կամաց-կամաց խոսակցությունը  
կենտրոնացավ սիրային հարցերի շուրջը : Մի  
քանիոք պատմեցին և իրենց կյանքից : Մեկը  
պատմեց, թե ինչպես ինքը սիրահարվեց առա-  
ջին անգամ . մի ուրիշն իր արկածներից պատ-  
մեց, յերբորդը՝ մի այլ բան :

— Իսկ դո՞ւ . . .

Արտաշը չորս կողմը նայեց :

— Յե՞ս . . .

— Հա, ի՞նչ կա վոր . . .

— Յես ի՞նչ . . .

— Դե դու ել պատմի լսենք :

Արտաշը գլուխը կախեց : Ի՞նչ պատմի :  
Սիրային արկա՞ծ . . . ինչքան փորսիրեց միտ-  
քը, նման բան չհիշեց : Միայն այն հիշեց, վար  
իր տառը տարեկան ժամանակ, մի անգամ,  
մի փոքրիկ աղջկա հետ խաղ անելիս, դրկեց

նրան և անցկացրեց առուն: Մեկ ել այն, վոր  
տնցյալ որը Վերդինեյին ասաց.

— Ինչ սիրուն խոպոպներ ունեմ...

Բայց դրանք ի՞նչ պատմելու բաներ են:  
Մեկը ծիծաղեց...

— Հը, չկա՞...

Արտաշը ձայն չհանեց:

— Խի՞ չկա, — մեջ ընկավ մի ուրիշը, —  
գիշեր-ցերեկ Վերդուշի հետ ո՞վ ե լինում,  
յե՞ս, թի՞ Արտաշը...

— Սուտ ե, — ասաց Արտաշն ու դուրս  
գնաց: Նա իրեն շատ անհարմար եր զգում: Նը-  
րան թվաց, թե իր յետեից բոլորն ել ծիծա-  
ղում են իր վրա:

Նա դուրս յեկավ ակումբից:

— Թյու՛ւ...

Արտաշը բարկացած եր յերեսում:

— Մարդ ել քսանմեկ տարեկան լինի՞,  
առանց սիրային դեպքի, — մտածեց նա: — Իր ըն-  
կերները, վորոնք ամուրի յեն, քանի՞-քանիսի  
հետ են յեղել: Իսկ ի՞նքը... Աղջիկ ե, իս-  
կուկան աղջիկ:

Նա մոռեցավ քսակարաններին: Վերդինե-  
յի լուսամուտից լույս եր յերեսում:

— Ահա: Ասում են՝ Վերդուշի հետ ե: Եղ  
քան խելք ունե՞մ վոր... Տարի ու կես ե, վոր  
իրար կողքի յենք ապրում, մենակ մի պատ կա  
իմ ու նրա սենյակի միջև, բայց սկի մտածած  
կա՞մ, վոր հետը կապվեմ...

— Ինչքան ել լավն ե Վերդուշը...

Արտաշն աշխատեց պատկերացնել նրան  
իր աչքի առաջ: Յեվ նա ներկայացավ ճիշտ  
այն դրությամբ, յերբ ինքը խոսք բաց արեց  
նրա խոպողիկների մասին:

Արտաշը կարմրեց, շիոթվեց, հետո ծիծա  
դեց:

— Լավ աղջիկ ե...

Հետո ավելացրեց.

— Նո՞ր և միտքը ընկել: Նո՞ր ևս տես-  
նում:

Յեվ անցնելով Վերդինեյի դռան մոտով,  
սահեց դեպի նրա լուսամուտը և նայեց ներս:

Վերդինեն ինչվոր շոր եր կարում: Կող-  
քին գրված եր կիսարաց գերքը:

Արտաշը Վերդինեյի սենյակում չեր յե-  
ղել: Յերբ լուսամուտից նայեց ներս, նրան  
շատ դուր յեկալ այդ փոքրիկ սենյակը:

— Ճաշակով աղջիկ ե Վերդինեն...

Վերդինեն ել, իր հերթին, Արտաշի սե-  
նյակում չեր յեղել: Մի անգամ միտյն դռնից  
նայել եր, ներս և Արտաշին անվանել եր փնթի  
սենյակ պահող: Արտաշն ել նրան մեշչանուհի  
յեր առել:

Նրանք վատ ընկերներ չեյին և Արտաշն  
այսոր զարմանում եր, թե ինչո՞ւ նրանք չեն  
գնում իրար մոտ, խոսում, յերեկոները մի  
բան կարդում կամ խաղում: Այդպիսով և՛ մե-  
նակ չի լինի, և'...

— Յեվ լավ կլինի, — մրմնջաց նա կտմա-  
ցուկ:

— Վաղը կդնամ վերգուշի սենյակը, մի  
քիչ զրույց կանենք...

Գլխարկը շպրտեց աթոռին, զոտին մահ-  
ճակալի ճաղերից կախեց, բլուղը դցեց մի  
կողմ, շրբերը նետեց սենյակի պատահած ան-  
կյունը և պառկեց քնելու:

4

Լույսը դեռ չեր բացվել, յերբ Արտաշն  
արթնացավ: Նրան ինչ վոր տարօրինակ զգա  
ցում եղ պաշարնել: Թվում եր, թե ինչվոր հե-  
ռու տեղում նվազում եր մի անուշ յեղանակ:  
Հետո զդաց, վոր իրը թե իր կուրծքն ուռչում ե  
հուզմունքից: Ինչքան լավ է, —մտածեց նա:

Ուրիշ անզամ՝ ել յե՞րբ եր այդպիսի բան  
պատուհել իր հետ: Վորքան գեղեցիկ են յերե-  
վում լուսացող առավոտը և այն այդիները, վոր  
կանաչել են, և այն լեռները, վոր յերեսում են  
եր լուսամուտից: Առավոտը շուտով կբացվի:  
ինչ լավ ն...

Արտաշը վեր կացավ ու մոտեցավ լուսա-  
մուտին:

Մի հեռու տեղից լսվում եր աքաղաղի  
ձայնը: Իսկ քիչ հետո ծղրտաց շչակը...

Նրա մտքերը մի նույթի շուրջը չեյին  
կենտրոնանում: Մեկ՝ առավոտը, մեկ՝ յերա-  
ժշտության հնչյունները, մեկ՝ դիմացի  
լինները, մեկ՝ այդիները... Մեկ՝ վերգի-  
նեն...

Կողքի սենյակումն ե նա...

Յերեկի հիմա քնած է: Իհարկե քնած է:  
Ո՞վ գիտե, դուցե վերմակը ծովել է, կախ է  
ընկել և նրա ուսը բացվել է: Հետաքիր է, թե  
ինչպես է քնել: Խոպոպները հիմա յերեկի քանդ-  
վել են...

Արտաշը հաղնվեց:

Էռւյսը բացվում եր:

Ինչո՞ւ համար առավոտն այսոր մի ուրիշ  
ահեսակ է: Ամեն ինչ լավ է, կարծես մեկը  
գուրզուրում է Արտաշին, մեկը շոյում է նրա  
մաղերը և ջնջում է նրա դեմ, նրան մոտիկ...

Յեվ լուռ, առանց մի շշուկ հանելու, Ար-  
տաշը նստեց:

Ելի Վերդինեն միտքն ընկավ:

Նրան թվում եր, վոր յեթե այս անդամ  
հանդիպի Վերդինեյին, պիտի շփոթիլի, շատ  
պիտի շփոթիլի և պիտի ամաչի:

Ինչո՞ւ...

Զկարողացավ պատասխանել:

Արդեն համարյա թե բոլորովին լույս  
եր: Ամեն առավոտ այդ ժամանակ Վերդինեն  
դուրս է գալիս և լվացվում է: Հիմա ել յե-  
րեվի դուրս կցա և կըլացվի: Դա սովորա-  
կան բան է, բայց Արտաշի սիրտն ինչո՞ւ տրո-  
վեց այսպես ուժեղ:

Նա նստեց լուսամուտի մոտ և սպասում է:

Իրոք վոր, քիչ հետո, Վերդինեյի դուռը  
չըխկաց, բացվեց ու Վերդինեն դուրս յեկավ,  
թեները և միզը բաց, որբիչն ուսի վրա և սա-  
պոնը ձեռքին:

Արտաշն զգաց, վոր իր յերեսը կաբժբում  
ե, տաքանում է, զգաց, վոր ականջները դժու-  
ժում են:

Վերդինեն լվացվեց:

Սպիտակ, սպիտակ են Վերդինեյի թեերը  
և այնպես լա՛վ են նրանք: Արտաշին թվաց,  
վոր սապոնի փրփուրն այդ թեվերի վրա սլո-  
տի ավելի քիչ սպիտակ յերեա: Յեվ նա  
ցանկացավ զոնե մի անգամ ձեռք տալ այդ  
թեվերին:

Վերդինեն սրբիչն ուսից վար առավ, սրբ-  
վելու համար: Նրա ուսը բացվեց և աղջիկը մի  
վայրկյանում ծածկեց այն: Բայց Արտաշը տե-  
սավ ուսի կլորությունն ու վողորկությունը  
և չնչեց խորը, աղահ..

Ու յերբ Վերդինեն տուն մտավ՝ տեսավ  
լուսամուտի մոտ նստած Արտաշին և շտապեց  
սրբիչով ծակել իր պարանոցն ու լանջը, վոր  
յերեւում եր պիշերաշապկի տակից, տղա շփոթ-  
ված հայացքով նայեց Արտաշին, բարենց ու  
տնցտվ:

Արտաշը բարեին պատասխանելու ժամա-  
նակ չունեցավ:

Նա դուրս յեկավ տանից, մի քիչ կանգնեց  
դռան մոտ, ապա մոտեցավ Վերդուշի դռանը:

— Վերդուշ...

— Յեկա:

Եւրբ Արտաշը, քնի հետ չընկնելով, շուտ  
եր արթնանում և Վերդինեյին տանն եր պըտ-  
նում, նրանք միասին եյին զնում գործարան:

Այս անգամ ևս նա շուտ եր վեր կացել:  
Վերդինեն դուրս յեկավ:

— Այսոր սովորականից շուտ ես վեր կա-  
ցել, — առավ նա, — յերեխ շուտ ես քննի...

— Զե: Դիշերը բոլորովին չեմ քննել:

Վերդինեն զննող հայացքով նայեց Արտա-  
շին, յերեխ մի բան կասկածեց, բայց չխոսեց:

Սովորականի հակառակ, այդ որը նրանք  
ճանապարհին ուրիշ վոչինչ չխոսեցին և զնա-  
ցին լուռ ու մտածելու:

Եշակը կանցեց, բանվորները մտան իրենց  
բաժանմունքները:

Արտաշն ու Վերդինեն բաժանվեցին և  
նրանցից յուրաքանչյուրը դնաց իր դործին:

## 5

Արտաշը մի քիչ տատանվեց և մտածեց.

— Ինչ կմտածի: Զի՞ ասի. — ես տարի ու-  
կես ե, վոր իրար կողքի յենք ապրում և հի-  
մա նոր, առաջին անդամն եմ մտնում իր սե-  
նյակը: Զի՞ ասի, վոր յերեխ մի բան կա այս-  
տեղ...

Բայց հետո սիրո առավ ու իր սենյակից  
դուրս յեկավ: Դրսում նրա աչքը դիպավ  
«Տե-ժե» Սաշիկին:

— Սաշիկ...

— Ո՛, բարե: Տեղկոմի քարտոնդարի  
տունը վո՞րն ե, Արտաշ:

— Տեղկոմի քարտուղարն ապրում է քա-

զաքի մյուս ծայրում։ Են, վոր մի որ յես ու  
դու դնացինք՝ կոլեկտիվի դրոշակը բերելու։

— Ինձ ասացին տեղափոխվել ե։

— Վոչ։ Ո՞վ ասաց։

«Տե-Ժե»-ն շտապ քայլերով հեռացավ։

Արտաշը նայեց նրա կոտրատվող շարժուձեւ-  
րին, չիք կոստյումին, յուղած մազերին և ձեռ-  
քում բոնած գլխարկին։

— Ազնվական բանվոր. . . Դուխու հոտ. . .

Պուդրա. . .

Յեկ ավելացրեց.

— Թյո՛ւ. . .

Հետո հանկարծ հիշեց, վոր ինքը դուքս  
եր յեկել Վերդինեյի մոտ գնալու համար։ Մե-  
ծեց նրա դուռը և ներս մտավ։

— Բարեւ. — Ժայռաց Վերդինեն։

— Բարեւ. . . Ինձ մոտ ձանձրալի յե. . .

Ասացի դնամ Վերդինեյի մոտ, մի քիչ զրույց  
անենք. . .

— Լավ արիր, անչնորհք, — կատակի տվեց  
Վերդինեն, — այս թերեւ տարի յե, վոր դրկեց  
ես, ոկի ներս չես մտել։ Սենյակս հավանում  
ե՞ս։

Արտաշը նայեց շուրջը։

— Շատ լավ ե. . . Ճաշակով ե. . .

— Քո սենյակիդ նման չե՞։

Արտաշին թվաց, վոր Վերդինեն հեղնում է  
իրեն։

— Ե, ի՞նչ անենք։ Դու աղջիկ ես։

Վերդինեն ծիծաղեց։

— Գող, սիրտը՝ զող։ Ճիշտ են ասել։ Սե-  
նյակդ ինչու համար կարդի չես պցում։ Փըն-  
թի՛...

Հետո ավելացրեց.

— Չնեղանաս...

Սկսեցին խոսել։ Վերդինեն իր կյանքից  
ողասմեց, հարցրեց Արտաշի անցյալից, հետո  
խոսեցին բջիջի մասին, դործարանի, հա-  
նող մրգերի և այլն։

Արտաշը սիրտ առավ.

— Վաղը յեկ իմ սենյակս և աչքովու  
տես։ Քոնն ո՞ւր, իմն ո՞ւր... Իսկական խո-  
ղարուն ե։

Վերդինեն ելի ծիծաղեց։

— Ի՞նչ լավ և ծիծաղում անովիտանը, —  
մտածեց Արտաշը և ասաց.

— Դեղնցիկ ես ծիծաղում...

— Ես գեղեցիկ չեմ վոր, — կատակի  
տվեց Վերդինեն։

— Դու ել ես գեղեցիկ։

Արտաշը վեր կացավ ու մոտեցավ նրան։

— Առավոտյան դու ըլացվում եյիր, յես  
թերդ տեսու։ Ինչքան լավն են... .

— Անամոթ, — հանդիմանեց Վերդինեն։

— Հիմա, — շարունակեց Արտաշը, — յես  
ինքս ինձ ասում եմ. — ինչ լավ թերդ եյիր,  
ինչ լավ աղջիկ ե Վերդինեն։ Խոպուլիկները...  
Աչքերը...

— Կամաց, կոիրահարվես, — ժպտաց Վեր-  
դինեն։

Արտաշը նույնակես ժպտաց :

— Դու ի՞նչ դիտես, թե սիրահարված  
չեմ :

— Հա՞...

— Ի՞նչ կա վոր...

— Վոչինչ... Գիտե՞մ վոր... Ախր ասում  
ելի...

Ինչքան պարզ աղջիկ ե Վերդինեն : Մաքի  
մեջ յեղածն խոկույն ասում ե : Մարդ ուղղակի  
ամաչում ե նրանից :

— Հր՞... — Կարցրեց Արտաշը :

— Ի՞նչ, — իր հերթին Կարցրեց Վերդի-  
նեն, ծիծաղելու պատրաստ :

— Այ, սա...

Յեվ Արտաշը գրկեց նրան :

— Թող, անամոթ...

Ապա, դուքս պրծնելով նրա գրկից, բար-  
կացավ .

— Ամո՛թ քեզ, խուլիդա՛ն...

Արտաշը շփոթվեց, հանկարծ շուռ յեկադ  
և դուքս դնաց :

Դրսում, պատի մոտ, նորից հանդիպեց  
«Տե-Ժե»-ն :

— Ասում են տեղափոխվել ե...

— Ասողը գլուխը քարուն ե ավել, դու ել  
հետը, — բարկացավ Արտաշն ու մտնելով իր  
մէնյակը, դուռը պինդ չըխկացրեց :

— Ի՞նչ արի...

Նստեց սեղանի մոտ :

— Այ քեղ խայտառակություն... Ի՞նչ  
արի...

Նրան թվաց, թե մեջտեղի պատը չկա, և  
Վերդինեն նայում է իրեն ու նորից բարկանում:

Ուշ գիշեր եր, յերբ Արտաշը պառկեց  
քնելու...

Առավոտյան նա արթմացավ ընկած տրա-  
մադրությամբ, տիսուր ու մտածկոտ: Յերե-  
կոյան պատահածից մնացել եր մի անհաճու-  
հիշողություն, վոր ճնշում եր նրան: Նա  
վախենում եր այն բանից, վոր կարող ե նո-  
րից հանդիպել Վերդինեյին: Ի՞նչ ասի կամ  
ի՞նչպես նայի նրա յերեսին...

Թեև շուտ եր վեր կացել ու հանգվել,  
բայց դուրս չգնաց: Վերդինեն դուրս յելավ  
լվացվելու, բայց այս անդամ, չգիտես ինչու,  
թեքվեց դեպի պատի միյուս կողմը, վորտեղ  
արդեն նա անտեսանելի յեր դառնում Արտաշի  
լուսամուտից:

Արտաշն սպասեց, մինչև վոր նա յեկավ,  
հագնվեց ու գնաց գործարան, հետո մի քիչ ել  
սպասեց և ապա դանդաղաքայլ դուրս յեկավ:

Շչակը փչեց:

Հանկարծ Արտաշը հիշեց, վոր դա յերկ-  
րորդ չչակն ե, ուրեմն ինքն ուշացել ե:

Քայլերն արագացրեց և մի յերկու բոպեյից  
հասավ:

Դազգյահներն արդեն չենիսկում եյին:

Յերբ հանդստի ժամի շքակը փչեց, Արտաշը տատանվում եր— դուրս դնո՞ւ, թե չե: Վերցրեց յուղամանը և սկսեց իր դազգյահը յուղել, քիթի տակ վինփնթալով.

— Լավ չեն յուղել, դռուում ե...

Ու շուրջը նայեց, տեսնելու համար, թե ո՞վ լսեց իր ասածը:

Բոլորը դուրս ելին գնացել:

Քիչ հետո մեկը դրսից բղավիեց:

— Արտաշ, յեկ նախաճաշի: Թեյը կսառչի: Ել ի՞նչ առես: Ճարահատված՝ դուրս գնաց:

Յեվ լավ եր, վոր նա Վերդինեյին չհանդիպեց: շարունակ նայում եր, սպասելով, վոր նա հանկարծ կարող ե դալ:

— Տիսուր ես,— ասաց Վարդպեսը:

— Տիսուր չեմ, դլուխս և ցավում մի քիչ:

— Դե, ել գործի ինչո՞ւ յես յեկել: Յավը կարող ե ծանրանալ:

— Զե՛, թեթև ե ցավում:

Վարսիտ Սերդոն, վոր թեյ եր խմում, դլուխը բարձրացրեց ու խորիմաստ հայացքով նայեց.

— Բամմ...

Նստել եր Արտաշն իր սենյակում ու մտածում եր.

— Լավ չտըի՛...

Բայց հետո Հիշեց, թե ինչքան լավ եր,  
վար ոքիկեց նրա մտածինը։ Հիշեց ու քունքերն  
սկսեցին խփել։

— Ե՛, հիմա լավ յիզա՞վ... Դեռ առաջ  
ընկերներ ելինք, խոսում ելինք իրար հետ։  
Իսկ հիմա այդ ել չկա...»

Նա հառաջնեց.

— Լավ չարի՛...

Աւ յերբ մտածում եր, թե տեսնես ի՞նչ և  
անում Վերդինեն, — կարդո՞ւմ և թե զրում,  
կամ դուցե հանդստանում ե, — իր դուռը թա-  
կեցին։

Ներս մտավ Վերդինեն։

— Ինչպե՞ս թե, — մտածեց Արտաշը։

— Բարեն, — ժամանակ և սովորականի ողես  
պարզ, ասաց աղջիկը։ — Ես յեկա սենյակդ  
տեսնելու։ Լավ սենյակ ե, բայց անկանոն ես  
պահում։

— Հա, — ասաց Արտաշը։ — Անկանոն ե։

Վերդինեն շուրջը նայեց։

— Ես ո՞ւր ես դրել։ Սա խողանակի տեղը  
չի։ Պահ, սա՞ ինչ ե. — դրֆերը շորերի հետ  
մի արկղո՞ւմ, թանա՞քը, դրչակո՞թը։ Իսկ այս  
կարգետն այստեղ չեն խփի...»

— Բա ի՞նչպես...

— Կաց յես սարքեմ, — ասավ Վերդինեն և  
առանց պատասխանի սպասելու սկսեց դասա-  
վորել ու կարգի գցել սենյակը։

Արտաշն ապշեց։

— Իսկանդես վոր լավ աղջիկ ն։ Փոխանակ

իմ արածից նեղանալու, սենյակս և կարգի  
բերում...

Նրա յուրաքանչյուր շարժումը սենյակում  
մի բան փոխոխում եր ու դեղեցկացնում։ Մի  
առարկա վերցնում եր, մաքրում և մի ուրիշ  
տեղ եր դնում, հետո մի ուրիշը։

Արտաշին թվաց, վոր նա ինքն ել կարող եր  
այլպիս անել, բայց թե ինչո՞ւ չի արել,—  
չդիտեր...

Կես ժամ հետո, սենյակը դարձավ շատ  
լավ և հաճելի։

— Տեսա՞ր։ Դե, սրանից հետո լավ կը-  
պահես։

— Ապրես, Վերդինե։ Ինչքան լավ սարքե-  
ցիր։

Հետո հանկարծ՝

— Վերդինե!...

— Ի՞նչ։

— Դու չե՞ս նեղացել ինձանից...

— Զե։ Վոչինչ։

Յերկուսն ել լոեցին։

— Ե՛ս բարի դիշեր, —ասավ Վերդինեն

քիչ հետո։ — Յես զնամ քնեմ։

— Գնա։ Լույս բարի։

Ինչքա՞ն հանդիսա քնեց Արտաշն իր նոր  
սենյակում։ Նրան թվում եր, թե դա իր սե-  
նյակը չե, այլ մի ուրիշինը, վոր անկարգ չի  
պահում և խառնախնթոր դրության մեջ չի  
թողնում ամեն ինչ։

Յեկ նա վորոշեց, վոր ինքն ել լավ պահէ  
իր սենյակը և ընդհանրապէս սկսի կարդի  
դաւ:

— Լա՛վ Վերդինե...

Անցավ մոտ մի ամիս:

Արտաշն ու Վերդինեն ավելի նյին մաեր-  
մացել այդ ժամանակամիջոցում: Համարյա-  
ամեն յերեկո, յերբ մութն ընկնում եր, նրան-  
ցից մեկը զնում եր մյուսի մոտ և նրանք յե-  
րեկոն անց նյին կացնում միասին:

Ամեն ինչ լավ եր, բայց Վերդինեն նկա-  
տում եր, վոր Արտաշը յերբեմն տիրում եւ և  
լուռ նայում եւ իրեն: Նա համեանում եր,  
բայց վորոշեց հարցնել: Յեկ իրոք, մի որ,  
յերբ Արտաշն իր մոտ եր, հարցրեց նրան.

— Դու ինչո՞ւ յես մերթ-մերթ տիրում:

— Յե՞ս... Զե՞ս... Հե՞նց այնպես: Ի՞նչ կա  
վոր...

Ու շփոթված լսեց:

Բայց մի քիչ հետո Վերդինեն նորից հարց-  
րեց և այս անդամ խորամանկ մի ժպիտ դեմ-  
քին.

— Դու հսկապես... սիրահարված չե՞ս  
ինձ վրա...

— ...Այո...

Արտաշը թուքը կուլ տվեց:

Վերդինեն ծիծաղեց և փաթաթվեց Արտա-  
շն:

— Այս, այդպես: Թե չե ի՞նչ... Խուլիդա-

նի նման, առանց հարցնելու, դրկում ես:  
Յես ել քեզ եմ սիրում:

Ի՞նչ եր կատարվում իր հետ, Արտաշը  
հաղիվ հասկացավ: Ուրեմն, ամեն ինչ վերջա-  
ցավ, ամեն դժվարություն հարթվեց: Ինքն ու  
Վերդինեն սիրում են իրար:

Ու յերբ անցավ համբույրի բոպեն, նրանք  
նստեցին իրար կողքի և սկսեցին ծրագրել:

— Մեր սենյակների միջև յեղած դուռը  
բաց կանենք, մեկը կսարքենք քնելու և պարա-  
պելու առնյակ, մյուսն ել՝ դրսի սենյակ և մի  
քիչ ել... խոհանոցի նման մի բան:

Վերդինեն, իրքի համաձայնության նշան,  
շարժեց գլուխը և ժամաց:

Արտաշը հորանջեց և հարցրեց.

— Հը... .

— Դեռ վո՞չ, —կարմրեց աղջիկը:

— Լավ, —համաձայնեց Արտաշն ու գի-  
շեր բարի ասելով, դուրս յելավ Վերդինեյի  
մոտից:

Լավ յերեկո, լավ յերեկո...

9

Գործարանում կյանքը սահում եր սովո-  
րականի պես: Միայն թե, մի յերկու փոքրիկ  
բաներ պատահեցին:

Սեղբակն այդ որը գործարան պիտի դար:  
Այդպես եր հայտնել նա մի քանի որ առաջ:  
Յեզ այդ պատճառով ել, նրա հետ մի բաժան-

մունքում աշխատող բանվորներն սպասում  
եյին նրան։ Խոսակցությունը ողոտվում եր  
Սեղբակի շուբջը։

Տեղեռմը ներս մտավ։

— Նոր լուր իմացե՞լ եք։

— Ի՞նչ լուր։

— Սեղբակին բանտարկել են։

— Ինչո՞ւ...

Ո՞վ գիտի Քրեյական բաժինը տեղեկանք և  
ուղարկել մեզ, վոր նա ձերբակալվում ե՞ւ մի  
տղջկա բոնաբարելու և մի ուրիշին խարելու  
գործով։

— Այ թե ինչ...

Հուեցին։ Գործի ժամանակ խոսել չի կարե-  
լի։ Յերբեմն, յերբ բանվորները մի յերկու  
խոսք եյին վտխանակում գործի ժամներին,  
վարպետ Վասիլին ինքն եր նկատողություն ո-  
հում։

— Զի կարելի...

Բոլորը ծիծաղում եյին։

— Հըմ...

Այս որից հետո, յերբ Սեղբակին ձերբա-  
կալեցին, դեռ յերկար որեր բանվորները խո-  
սում եյին նրա մասին։ Յեվ անհամբեր սպա-  
սում եյին նրա դատի կայանալուն։ Վոչվոք  
չեր պաշտպանում նրան։ Արտաշը գլուխն եր  
որորում, խսկ Վարպետ Վասիլը ծնծնացնում  
եր։

— Տեր... Տեր... Տեր...

Արտաշի և Վերդինելի ամուսնության  
լուրն այդ առավոտ տարածվեց գործարանում։  
Յերեկոյանն, գործարանի ակումբում, նշանակ-  
ված եր նրանց կարմիր հարսանիքը։ Բոլորն  
ուրախացել եյին և չնորհավորում եյին թե  
Արտաշին, թե Վերդինելին։

— Շան տղա, լավ աղջիկ ձեռք դցեցիր . . .

— Վերդուշը լավ աղջիկ ե։ Բնավորու-  
թյունը, ինքը . . .

Ենվ այսպես շարունակ։

Բայց հանգստի ժամին մի հետաքրքիր  
բան պատահեց, վորի պատճառով բոլոր բան-  
վորները ծիծաղից թուլացան։

«Տե-Ժե»-ն առանձնանալով, զրել եր մի  
նամակ, վոր ինքը սիրում եր Վերդինելին,  
առանց նրան չեր կարող ապրել, բայց տատան-  
վել եր նրան հայտնել իր մտադրությունը։  
Այժմ, յերբ նա չի կարող ապրել առանց իր  
Սեղայի, առանց իր Դեղղեմոնայի, ինքնասպա-  
նություն ե գործում։ Վոչ վորի չմեղադրել։  
Մնաք բարեւ . . .

Ապա մտել եր արտաքնոցը և խմել եր մի  
սրվակ դուխի։

Բանվորներից մեկը նկատել եր այդ։

«Տե-Ժե»-ին դուրս բերին արտաքնո-  
ցից, սարսափից չուած աչքերով։

— Ոգնությունն, յես չեմ ուզում մեռնել։  
Ես ապրել եմ ուղում։ Ա՞, իմ Սեղա, Դեղղե-  
մոնա, Ոֆելիա . . . ինձ հիվանդանոց տարնք,  
չո՞ւած . . . չո՞ւած . . .

Բժիշկն իզուր եր համոզում նրան, վոր  
վոչինչ չկա և դուխին վտանգավոր չե:

Նրան տվեցին փսխեցուցիչ զեղ:

Բոլոր բանվորները հավաքվել եյին նրա  
դիմին և չգիտեյին ինչ անել, Ծիծաղը խեղ-  
դում եր բոլորին: Յերբ նա բաց եր անում  
բերանը՝ ո՛, Դեղումոնա՛, ո, իմ կուռք բացա-  
կանչելու համար, փչում եր դուխու հոտը և  
այնպես թունդ, վոր շատերը քթերն եյին  
բռնում:

- Փյուֆ... Գոնե մազութ խմեյիր:
- Նաֆթ խմեյիր...
- Բենզին...
- Սպիրտ...

Հուզված «Տե-Ժե»-ին տարան տուն և յե-  
կան, հայտնելով, վոր նա արդեն «զտել և  
ինքնիրեն» և կարծես վոչինչ չի պատահել:

Դեռ յերկար ժամանակ բանվորները հե-  
շում եյին այդ դեպքն ու ծիծաղում:

11

Յերբ սանդուխքներով դեպի ակումբի  
դահլիճն եր բարձրանում Արտաշը, կարմիր  
հրսանիքի համար, հանկարծ մի բան հիշեց ու  
ծպտաց:

— Յես ուզում եյի սիրային արկած ունե-  
նալ: Առաջին փորձն անհաջող անցավ և լայ-  
յեղավ, վոր անհաջող անցավ...

իսկ յերբ հասել եք սանդուխքների վերևի  
ծայրին, ժպտաց.

— Փոխանակ սերային արկածի, իրոք վոր  
սիրուհարվեցի...

Մոտեցավ դռան և բաց արեց.

— Լավ աղջիկ և վերգինեն...

Ներս մտավ:

Ներսում զղբղաց ծափահարությունը և  
կարմիր հարստանիքն սկսվեց:

---

## ԱՐԵՎԵԼ, ՀՈՒՐԾՐԱՆ ԱՐԵՎԵԼ

1

Իմ յերկրի լեռներում առատ եր արեգակի  
լույսը և լեռների լանջին տապ և լինում յուրա  
քանչյուր ցերեկ: Այնտեղ դեղնազույն արտերի  
հատ ու կտոր շերտերն են փոված անկանոն  
շարքերով, խոկ վերեւում, դեպի սարի դագա-  
թը, դեռ չի հասել վոչ մի փայտե կութան:  
Այնտեղ քարքարոտ հողը պղնձազույն և և  
կարմրին և տալիս հեռվից: Մի կողմում մի  
ճեղքվածք, մյուս կողմում՝ անկանոն սարի  
սապատը: Յեվ այդ ամենը պղնձազույն: Յեվ  
այդ ամենի վրա իր լույսն ու տապն և հորդում  
արեւը, իմ յերկրի հուրծրան արեւ:

Ներքեւում, ուր այլևս զառիվայր չկա և  
հարթ գաշտն և փովում, ներքեւում ուղիներն  
են անցնում, մանեման, խոկ այդ ուղիներով  
սայլերն են անցնում կմախօքի նման ցցուն  
կողափայտերով: Անիվների մազութը փերջացել  
և անիվները ճոռում են ինչ վոր հնորյա-  
յերդ՝ յերկար ճանապարհի և դանդաղ յեպա-  
սոյլի մասին: Գլորվող անիվների ճպած ըստ-  
վերները ծածկում են յեղների վոտնահետքերը  
և իրենց բետեից թողնում են վիխրուն հետք

Ճանապարհի գեղին հողի վրա: Դեղին և ճանապարհի փոշին, զեղին ևն ողոտոսայան արտերը, զեղին ևն յեղները, վոր լծված ևն այդ հոմքա սայդին:

...Յեկ զեղին և արե՛ր, հուրցրան տրել...

2

Աթոն արև շատ եր սիրում: Նույնիսկ այն ժամանակ, յերբ դեռ վեդ խաղալ ել չդիտեր, նա սիրում եր արեւը: Յերբ իրենց ախոռից միակ կովն ու յերկու յեղները տանում եր դուրս, խառնելու հանդ գնացող նախրի հետ, նա արեին եր նայում ու ժամանում եր: Ժպտում եր ծագող արեին:

Յերբ վերադառնում եր տուն հաց ուտելու, նա սիրուն արեի մասին եր ժամանում: Քիչ եր պատահում, վոր նա տանը հաց ուտեր: Վերցնում եր նանի թխած բոքոններից մեկը և կըծելով դուրս եր գնում:

Հասնելով կալերին, Աթոն ներս եր վաղում, ընկերներին գտնելու համար: Յեկ յերբ զանում եր նրանց, նրանք գնում եյին դեղերից մեկի մոտ խաղ անելու, կամ գնում եյին կալերից դուրս, ճանապարհի, լայն ճանապարհի վրա վաղ տալու համար: Յեկ ով վոր ամենից առաջ հասներ քարե կամուրջին, նա կլիներ այդ որվա բոլոր խաղերի առաջնորդը:

Հորիզոնի մի անկյունից դուրս եր գալիս ամպի մի փոքրիկ պատառ: Հետո նա մեծա-

նում եր, մեծանում, և իր մի ծայրով ծածկում եր արել: Զարժացած Աթոն վեր եր նայում դեպի յերկիքն ու կանչում եր արեին, դասագրքի մեջ սովորած վոտանավորով:

Բայց հաճախ արել վոչ լսում եր և վոչ նէ դալիս: Սկսում եր անձրել: Ճարահատված՝ Աթոն տուն եր վաղում, ճանապարհին պոելով անձրեի յերդը:

Զար տղա յեր Աթոն: Դրա համար եր, վոր տանը նրան ծեծում եյին, յերբ նա խսովի յետե ընկած, գործը մոռանում եր:

### 3

Բայց Աթոն գործը մոռացող տղա չեր:

Յերբ տասնհինգ տարեկան դարձավ, նա արդեն իր հոր աջ կուռն եր, ինչպէս ասում Եյին դրացիները: Իսկ հայրն ասում եր.

— Այ բալամ, մենք ել իսո հարուստ չե՞նք, վոր մշակ պահենք: Մենք մեր ուժով պիտի յոլա գնանք: Աշխատիր...

Լույսը բացվելիս Աթոն վեր եր կենում և հազնում եր շորերը: Յերբ աղբը ափին կուցած նա լվացվում էր, նայում եր յերկնքին.

— Եսոր արե և լինելու...

Յեթե կողքին մեկը լիներ, այդպես կասեր նա, իսկ յեթե մենակ ինքը լիներ, այդպես կմտածեր: Հետո կզար տուն ու տնից ել կզնար դաշտ, աշխատելու:

Խավար եր դյուղը, բայց լույսն արդեն մտնում եր այնտեղ: Խավարը յետ եր քաշվում

ու կծկվում եւ։ Աթոյի հայրը վորքան ել անուս-  
սում, դարձյալ գիտեր ուսումի ողուտը։ Նա Ա-  
թոյին տվել եր սովորելու գյուղի դպրոցում,  
դբա համար ել խիղճը հանդիստ եր։ Իսկ Աթոն  
շատ ուրախ եր, վոր կարդալ գիտե ու, բացի  
զասագրքերից, նույնիսկ կարող ե թերթ կար-  
դալ։

## 4

— Հո՛, Հո՛, Մարալ յեզ, Հո՛, Հո՛, Զեյ-  
րան յեզ։ Հո՛ Մարալ, Հո՛ Զեյրան . . .

Փխրուն հողը ճեղքվում եր գութանի յեր-  
կաթե խոփից և վեց զույգ յեզներն ավելի ե-  
լին առաջ անցնում։ Վեց զույգ յեզ, վեց ըն-  
տանիք, վեց հոտաղ։ Մի գութան ու մի մաճ-  
կալ։ Լավ են ասում, վոր գեղ կանգնի, գերան  
կկոտրի։ Այսոր Պետոյենց արտն են վարում,  
վաղն՝ Աթոյենցը, մյուս որը՝ մյուսինը և այդ-  
պես յոլա կղնան։

Մեկը հոռովել եր զլում, իսկ հետո վեց  
հոտաղ միասին, զիլ ձայնով հնչեցնում ելին։

— Հոռովել Հո՛ . . .

Հետո մյուս հոտաղն եր հոռովելի խոսքերն  
ասում, և նորից խումբը ձայնակցում եր։ Իսկ  
յերբ բոլորը լուսմ ելին, Աթոն եր յերգում ա-  
ռանձին։ Այս անդամ արդեն, նա յերգում եր  
«զասագրքի հոռովելը»։

Խավար եր գյուղը, բայց լույսն արգեն  
մտնում եր այնտեղ։ Առաջին կարմիր դրոշա-  
կը պարզվեց մի խրճիթի ծայրին և այդ խրճի-  
թում գյուղխորհրդի գրասենյակը տեղավար-  
վեց։

Յերկրորդ կարմիր դրոշակի տակ դպրոցն  
եր, իսկ յերրորդի տակ՝ խրճիթ-ընթերցարանը։

Մի քանի կրծքեր զարդարվեցին կարմիր  
նշաններով, վորոնց վրա քարտուղար Սերգոն  
մեծ դժավարությամբ կարդաց ոռւսերեն յե-  
րեք տառ։ Ե՞յ գիրդի ուսում, ոռւսերեն լե-  
զու…

Մի յերեկո Աթոն արտից տուն եր վերա-  
դառնում, բերելով սայլի վրա բարձած համկի  
դեղը։ Հայրը գալիս եր Աթոյի հետ և մի զույգ  
դեղին յեզները դանդաղ շարժվում եյին։ Աղ-  
բյուրի մոտ հանդիպեց Յեղոն։

— Աթո, յեկ, բան եմ ասում։

Աթոն ճիպոտը տվեց հորն ու մոտեցավ։

— Զե՞ս գալի ժողովի։

— Ի՞նչ ժողով։

— Կոմսոմոլի։

— Հա՞։

— Բմ։

— Գնանք։

Գյուղում յերկար ժամանակ խպոռք նյին  
Ակոմբոմոլի» մտսին։ Յերիտասարդներն ան-

Համբեր սպասում է յին բջիջի կազմվելուն։  
Հարժավան գյուղում արդեն քկոմսութ կար,  
վորն ուներ տանչորս անդամ։

— Անք ինչո՞վ ենք պակաս, — մտածում  
եր յուրաքանչյուր յերիտասարդ, վոր կոչու ու-  
ներ իր ձեռքերի վրա և վոտքերին՝ սովորական  
արելս։

Այդ որը լավ որ եր։ Բջիջ կազմակերպվեց,  
անդամներ ընդունեցին, հետո զեկուցում յե-  
ղափ, իսկ մի ամիս հետո արդեն ինչե՛ր չե-  
զան... Դարի հողերից մինչեւ Պուճուր Քարա-  
փը, վանքի արտից մինչեւ բայն «շոշր», դրնդում  
եր կոմյերիտամիության անունը։ Աիրողներ ել  
յեղան, չսիրողներ ել։ Ու, զարժանալի բան։  
Ով վոր չեր սիրում, նա յոթութ լծկան ուներ  
տանը և ուրիշ շատ բան ուներ։ Նրանց հին լեզ-  
վով համփա. եյին ասում, իսկ նոր լեզվով՝  
կուլակ։

## 6

Իմ յերկրի լեռներում առատ և արեգակի  
լույսը և լեռների լանջին տապ և լինում յու-  
քանչյուր ցերեկ։

Վոսկեղեղին ճանապարհի վոսկեղեղին  
փոշու միջով քաղաք և գնում Աթոն։

Այն յե՞րբ եր, մի տարի առաջ եր, թե՞ մի  
դար առաջ եր, յերբ Աթոն գրվեց կոմյերիտ-  
ամիության մեջ և շա՞տ քիչ բան գիտեր։ Այն  
յե՞րբ եր, յերեք մի առաջ եր, թե՞ յերեք

տարի առաջ եր, վոր Աթոյին ուղարկեցին քաղաք, կուսակցական դպրոց, ոռվորելու։ Այն յե՞րբ եր, մի շաբաթ առաջ եր, թե՞ մի տարի առաջ եր, վոր Աթոն արձակուրդ առավ ու գնաց իրենց գյուղը։

Իսկ հիմա, յոթնորյա արձակուրդը լրացել ե և Աթոն նորից գնում ե քաղաք, կուսակցական դպրոց։

— Վորդիս մի կտոր հացի տեր ելավ, — մտածում եր Աթոյի հայրը։

— Մարդամեջ մտավ, — ասում եյին մյուս գյուղացիները։

— Ես ուսումն ել մի ուրիշ տեսակ արե և, վոր լուսավորում ե, — մրմնջում եր ինքը՝ Աթոն։

Պայծառ ե արեն իմ յերկը պղնձագույն լեռների տաք լանջերին, բայց ավելի պայծառ ե արել կուսակցական դպրոցում։ Դրա մասին Աթոն շատ է մտածել։ Յերբ տուաջին անգամ ներս մտավ դպրոցի գոներից, իրեն մի քիչ նեղված զգաց, բայց միքանի որ հետո ընտելացավ ու տեսավ, վոր բոյոր ընկերներն ել իր պես կոչտ ձեռքեր ունեյին։ Միայն թե նրանցից մի մասի ձեռքերը մուրճի կոթից եյին կոշտացել, մյուսներինը՝ մանդաղի ու մաճի՛ Յեվ Աթոն զգաց, վոր նրանցից յուրաքանչյուրն այդ դպրոցից տանելու յե մի արե, պայծառ ու լուսավոր։

Հե՛յ գիտի աթո՛: Վաղը, մյուս որ, մեկ  
ել տեսար՝ ավարտեցիր ու հայդե, դեպի  
գյուղ... .

## 7

Զա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չռ՛ւխկ... Վո՞ր  
տարվանից ե մնացել այդ փայտե որորոցը:  
Աթոն ել ե նրա մեջ պառկէլ, նանեյին վոր հա-  
վատաս, Աթոյի հայրն ել ե այն որորոցում  
անցկացրել իր մանկության որը:

Զա՛խկ, չո՛ւխկ, չա՛խկ, չռ՛ւխկ: Խոկ հի-  
մի՞ ով ե անուշ քնել այդ հին որորոցի մեջ:  
Ո՞ւմ յերեխան ե դա: Աթոյի՞նը: Այ գետինը  
մտած Աթո, դեռ յերեկ մի մատ յերեխա եյիր.  
Խոկ հիմա դու ինքդ յերեխա ունեցար:

Նանեն որորոցի մոտ նստած, որորում ե  
Ավաղին: Յերբեմն նրա դեմքի պառաված  
խորշոմները յետ են զնում ու նա իր թոռան  
հանդստի համար յերգում ե մի հին յերգ:  
Զա՛խկ, չո՛ւխկ, նորից որորվում ե որորոցը,  
չխչխկում են որորոցի փայտից կախված կո-  
ճերը, և յերեխան քնում ե հանգիստ:

Յերեխայի մայրը, կոմյերիտուհի Ար-  
քուշը, աշխատում ե կաթնարտելում: Յերը  
յերեկոյան կովերը դաշտից տուն յեկան, նա  
նսուեց փոքրիկ աթոռակի վրա ու սկսեց կթել  
նրանց: Նրա սպիտակ մատների հալումից դուրս  
եր ցայտում սպիտակ կաթը դույլի մեջ, այն-  
տեղ սպիտակ պղպջակներ առաջացնելով:

Հանկարծ դանդաղացան Աիբուշի մատների հպումները, նու ուղղվեց աթոռակի վրա, ձեռքը դեմ տվեց ծնոտին ու սկսեց մտածել, դեմքի վրա խաղացնելով հաղիկ նշմարելի մի ժպիտ:

Ավագ...

Հոկտեմբերիկ Ավագ.

Պիոներ Ավագ...

Կոմսոմոլիստ Ավագ...

Կոմունիստ Ավագ...

Կովը խլզկոտած նայում եր: Կողքի մսուարի մոտից լսվեց մի ծիծաղի ձայն և յերեաց Մանիշակը:

— Աղջի, կովը խէ՞ չես կթում...

Սիրուշը բարձր ծիծաղեց ու շարունակեց իր գործը:

8

Զա՛իկ, չո՛ւկիկ, չա՛խկ, չո՛ւխկ, քնիր Ավագ: Քու հայրդ՝ Աթոն աշխատում ե գալառում: Նա կուսակցական դպրոցն ավարտել ե ու հիմա այդ բոլոր գյուղերում ցըսմ ե իր բերած արել, հուրհրա՛ն, պայծառ արեր:

Խրճիթների առաստաղների սևացած գերանների տակ ինչքա՞ն մեծ ուժ կա ամբարված... Մըստ առաստաղների տակ վաղվակառուցողներն ու ստեղծագործողները դեռ վնդեն խաղում, կամ կրծոտում են բոքոնի կտորները:

Աթոն առան եր վերադառնում։ Ցերեկվա  
արել, ամուսն արել, այրում եր շրջապատն  
էր տապով և փոռում եր իր առատ լույսը։

Այս ճանապարհով նա շա՛տ ե անցել։ Մի ։  
Ժամանակ ուրիշ կերպ, իսկ հիմա ուրիշ։

Մի ժամանակ նա իր հոգում ուներ մի ա-  
րել, լուսավոր ու տաք, իսկ հիմա յերկու արել  
ունի։ Մեկն այն, վոր վառվում ե յերկնքում,  
մյուսն այն, վոր Աթոյի նման շատերը ձեռք  
բերեցին հետո։ Մեկը մյուսից ավելի լուսա-  
վոր, ավելի տաք, ավելի պայծառ……

Աթոյենց տան դուռը ճռոաց և ժպտերես  
ներս մտավ կուսակցական Աթոն։

Դրսում փայլում եր արել, հուրհան  
արել……

## ԾԱՂԿԱՎՈՐ ԶԻԹԸ

### 1

Ցեխաշեն պատերի մոխրագունն ուներ իր  
հաղուստների վրա և աթարի սրճադույնն ու-  
ներ իր փափախի վրա այն տղան, վոր դուքս  
յեկապ մի փոքրիկ դռնից և ուղեվորվեց դեպի  
քաղաք։ Նա ուսին գցել եր մի վառվոռն խուզ-  
ջին և կրծքին կպցըել եր մի վառվոռն նշան։  
Բացի խուրջինից ու նշանից, ամեն ինչ դորչ  
եր նրա վրա։ Փոշեկալած մազերի գանգուրը  
կախվել եր նրա ճակատին և այդ ճակատից  
ներքեւ նրա թուլս դեմքն եր։ Այդ թուլս դեմքի  
վրա կար մի դժվարհասկանալի արտահայ-  
տություն։ Լայն ճակատի վրա կարծես հույս  
դրված լիներ, շրթունքների ծայրերին՝ ժայիտ  
և աչքերի մեջ՝ կամք։ Խուրջինի մեջ կար մի  
աման յուղ, վոր նշանակում եր թե «չիթ և  
հարկավոր», մի գլուխ պանիր, վորի իմաստն  
եր՝ «նավթ չունենք» և յերկու պուտուկ մա-  
ծուն, այսինքն՝ «աղ, լուցկի, մի քիչ ել միբու».  
յերեխանց համար»։

Դաշտի ծաղիկների գունազեղությունը  
չուներ և դաշտի ծաղիկների գեղեցկությունը

չուներ այն տղան, վոր քաղաք եր գնում վոր-  
շոտ ճանապարհով...

Նրա անունն Արշակ եր:

2

Յերբ Արշակը ծախեց խուրջինի մեջ  
յեղածը, նա գնաց շուկայի ծայբի կոռավերատիւ-  
վը, պետք յեղած իրերը գնելու: Յերկար  
տնտղեց աղն ու լուցկին, ստուգեց մըդի  
լավն ու վատը, գները հարցրեց, նորից տնտղեց  
ու նորից հարցրեց և վերջապես առավ: Իսկ  
հետո անցավ խանութի մյուս կողմը, վորտեղ  
ծախում եյին կտորեղենը: Յերբ բանր չիթ  
գնելուն հասավ, նրա աչքերն ավելի լարվեցին,  
նա մատներով շոշափեց կտորը, թքոտեց մի  
քիչ ու տրորեց նրա ծայբն իր ձեռքի մեջ և այդ  
բոլորից հետո նայեց չթի գույնին: Դուր չե-  
կավ: Ուրիշ տեսակն ուզեց: Գործակատարը  
բերեց ուրիշ տեսակը: Արշակը յերրորդ տե-  
սակն ել ուզեց և գործակատարը յերրորդ տե-  
սակն ել բերեց:

— Ի՞նչ արժի, — հարցրեց Արշակն այս ան-  
դամ: Դա նշանակում եր, վոր չիթն իր սրտովն  
եր:

Գործակատարը դիմուն ասեց:

— Հմ...

Սակարկել չի կարելի: Սա կոռավերատիվ և  
և գները վերջնական են: Արշակն այդ մասին  
վաղուց գիտե:

- Կարի մի վեց-յոթ արշ... մէտր:
- Վեց թե յոթ...
- Յոթ:

Յերբ մկրատը ճռուաց ու չթից պոկեց Արշակի բաժինը, Արշակը ժպտաց: Հ'ը, ի՞նչ կա, սատանա Արշակ: Եղ ո՞ւմ համար ես տանում եղ սիրուն չիթը: Զլինի՞ թե...

Նա փողը վճարեց և յեկավ գործակատարի մոտ, չիթն ստանալու: Մի անդամ ել նայեց և մի անգամ ել հավանեց:

Չիթն ստանալուց հետո, նրա միտքը մի րան ընկավ և նա հարցրեց.

- Ես վո՞ր յերկրի չիթն ե, ընկեր...
- Տեղական...

Վո՞նց թե տեղական... Զհավատաց Արշակը: Յեթե դյուզում մեկն եղամ բան ասեր, Արշակը կբամփեր նրա գլխին:

Նորից հարցրեց.

— Ընկեր ջան, ներողություն, վոր զբաղված ես, ամա շատ ա հետաքրքիր: Վո՞նց թե տեղական չիթ:

— Քաղաքում գործարան ե բացվել, եղ գործարանում են չիթը պատրաստում, — բացատրեց գործակատարը:

Յեկ վորովհետեւ նա զբաղված եր, դրա համար ել Արշակն ուրիշ վոչինչ չհարցրեց և դուրս յեկավ կոռպերատիվից:

— Դրա՞ համար եր չիթն եժան։ Հենց յես  
ել առում եյի՝ վա՛յ թե լավ տեսակիցը  
չի, — մտածում եր Արշակը, ճանապարհին,  
գյուղ վերադառնալիս։ Կեսորվա արեւ սաս-  
տիկ շոդ եր անում։ Ելի լավ եր, վոր ամպի  
փոքրիկ պատառները մերթ-մերթ ծածկում ե-  
յին արեն ու մի քիչ հով անում։

Դաշտում ծաղիկները, գունագեղ, զեղե-  
ցիկ ծաղիկները ժպտում եյին այս ու այն կող-  
մից և Արշակին թվում եր, թե ամբողջ դաշտը  
մի չիթ ե, մի ծաղկանկար չիթ, եժան ու դի-  
մացկուն։

Սպասի մի հալա, — մտածում եր Արշա-  
կը։ Կոռպերատիվում նա ուրիշ շատ տեսակ-  
ներ եր տեսել և հիմա մտքում դրել եր, վոր  
մյուս անգամ քաղաք գնալիս, դրանցից ել  
առնի։

Յերեսի դրանք ել տեղական եյին։

Յեվ նա սկսեց տեղականի մասին մտածել։  
Վո՞նց . . . Հա՛յ շեն մնա իշխանությունը, չթի  
Փաքրիկ ել ըացեց, ելի՛ . . .

Յերբ հասավ գյուղին, Արշակը կանգնեց,  
բաց արեց խուրջինի մի քունջը, քիթը ներս  
խոթելով նայեց չթին և նորից համոզվելով,  
վոր վատ ընտրություն չի կատարել, վստահ  
մտավ գյուղ։



Այդ որը խրճիթի սենյակներից մեկում  
հավաքված մարդկանց Արշակը պատմում եր  
տեղական չթի մասին իր լսածը։

Հետագայում չթի դործարանի մասին  
շատ բան իմացան դյուղում:

Արշակն ամենից շատ եր հետաքրքրվում:  
Յերբ լսեց, վոր լրադրի մեջ այդ մասին կա  
դրած, վազ տվեց խրճիթ-ընթերցարան, կար-  
դալու համար:

Յեվ այդպես անցան որեր, քաղաքից շատ  
չիթ յեկավ դյուղ, շատ աղ ու լուցկի յեկավ,  
բայց ելի ցեխաշեն եյին պատերը և նույնի աթարը  
սրճագույն եր: Կիրակի որերը, յերբ դյուղում  
դաշտային աշխատանք չեր լինում, ջահելները  
դուրս եյին դալիս դաշտ, դրուանքի և պար  
բռնելու համար: Աղջիկներից մեկը, վորի  
անունը Նարգիզ եր, հագին ուներ Արշակի բե-  
րած չիթը: Արշակի ի՞նչն եր այդ աղջիկը...

Ամեն առավոտ յերեք տղամարդիկ եյին  
դուրս դալիս Արշակենց տանից, վորոնք Արշա-  
կի յեղբայրներն եյին, մի ծերուկ եր դուրս  
դալիս, վոր Արշակի հայրն եր և դուրս եյին  
դալիս յերկու կին,—Արշակի յեղբայրների կա-  
նայք: Նրանք գնում եյին դաշտ, աշխատանքի:  
Յերեխաները դուրս եյին դալիս տանից և  
նրանցից ամեն մեկը մի կողմ եր գնում: Տանը  
ժնում եր պառավ նանին:

Իսկ Նարգիզը չկար: Արշակենց տանեցիո-  
ներից չեր նա: Ուրեմն ո՞վ եր... Այդ մասին  
միայն յերկուսը գիտեյին.—Արշակն ու Նար-  
գիզը: Մի տարի առաջ, պարի ժամանակ, Ար-

շակը սեղմել եր նա թեն ու աչքով եր արել:  
Հիմա ել «ուղել» ե նրան և շուտով ամուսնա-  
հալու յե:

5

Մի որ բջիջի քարտուղարը հանդիպեց Ար-  
շակին:

— Արշակ:

— Ի՞նչ:

— Դու ի՞նչ աշխատանք ես անում: Յեղ-  
րայրներդ առանց քեզ արտն ու անասուններին  
յոլա տանել չե՞ն կարող:

— Յոլա յեն տանում: Յես յեղած—չեղած՝  
մեկ ե: Յանի ի՞նչ արտ ու նախիր ունենք, վոր  
յոլա տանել չլինի: Ենա՝ յես ուզում եմ բատ-  
րակ գրվեմ, մի տեղ վարձով աշխատեմ:

— Չե՛, եղ հլա թող: Դու վոր բացակա-  
յես, ձեր տունը, անտեսությունը խո չի՞ տու-  
ժի:

— Յես ասի՛, չե՞: Բատրակ եմ գրվելու...

— Քարտուղարը տեսնես ի՞նչ ե ասելոււ  
Շա՛տ հեռվից ե բոնացրել, —մտածեց Արշակը:

Հենց եղ ժամանակ քարտուղարն ասաց.

— Գիտե՞ս ինչ: Մեր բջիջից մեկին դրկե-  
լու յենք քաղաք, «կուրսերը»: Մի յերկու ամ-  
սից հետո պիտի ավարտի ու չթի գործարանի  
ըսնվոր դառնա: Ուզում ե՞ս գնալ...

Յեթե ճամբով մարդիկ չանցնեյին ու դի-  
մացի կտուրի վրա աղջիկներ կանգնած չլինե-  
մին, Արշակն ուրախությունից պար կգար:

— Դե շուտ պատրաստվի, վոր եղուց  
դնաս, — ասաց քարծուղարը:

Արշակն ի՞նչպես հասալ տուն, ինքն ել  
չիմացավ:

6

Չորս ամիս հետո, Արշակը կանգնած  
տեքստիլ գործարանի դապդյահներից մեկի տ-  
ռաջ, չիթ եր գործում: Գործում եր ու մտա-  
ծում: Ինչքա՞ն չիթ կա... Սրա կիսի կեսը վոր  
բաժանեն իրենց գյուղին, ամեն մի մարդուն  
յերևի կհասնի հաղար մետր: Յերկու հաղար ել  
կհասնի: Եսքան չիթ վոր տեսնեն գյուղում,  
կղժվեն: Տեսակ-տեսակ, գույնզգույն...

Արշակը չխչխկացնում եր մաքուքն ու  
հիշում:

Հրեն, իրենց գյուղը: Հիմի տեսնես Նար-  
դիղն ի՞նչ ե անում: Յերևի փոցիս անելիս կլի:  
Բա իր յերեք յեղբայրնե՞րը, փոքրիկ Ո-  
սե՞փը...

Հետո հիշեց իր քաղաք գալը: Սկզբում  
սիրող ամիրեց, բայց վերջում ոռվա-  
րեց: Հանրակացարանում: բոլորն ել իր պես  
տղերք եյին: Բոլորի հետ ընկերացավ: Վարի-  
չը խոսք եր տվել, վոր մի ամսից հետո աը-  
ճակտորդ պիտի տա Արշակին: Արշակն ել գոր-  
ծում եր չիթն ու սպասում: Սեպտեմբեր ամ-  
սից հետո նա բանֆակ կդնա և ուսումը կշարու-  
նակի:

Արշակը գործում եր ու մտածում:

Նամակ:

«Հասնի գյուղն Ս.....լու, ձեռն Պետրոս  
Դամաղյանցի:

Սիրելի յեղբայր Պետրոս:

Սաքուլենց տղեն խարարը բերեց. իմացա,  
վոր վողջ առողջ եք: Սաքուլենց տղեն առաց,  
վոր մի քիչ փող ապետք: Փողն ուղարկում եմ:

Յեթե ինձանից կհարցնեք, յես վողջ և ա-  
ռողջ եմ ու բանվոր եմ: Որեկան ենքան չիթ ու  
կտայի ենք գործում, վոր մեր տանը հերիք կա-  
նի հինդ վեց տարի: Անցած որը գործարանի մի  
ուրիշ մասն ել գործի դրեցին: Ես յերկու որս  
նոր մաշինաներ են բերելու:

Յես եստեղ լավ եմ: Սովորեմ պիտի բան-  
ֆակում: Բջիջ եստեղ ել կա:

Նամակիս հետ ուղարկում եմ ուղածդ փո-  
ղը, նմանապես չիթ ու կտավ, վոր ոռճիկիս  
հաշվին առա: Նմանապես են նախշուն չթից ել  
եմ ուղարկում, վոր նարդիզին տաք, իրեն չոք  
կարի:

Այլ վոչինչ չունեմ գրելու: Մի ամիս յե-  
տո յես կզամ: Բարե բոլոր անեցոց, նմանա-  
պես Նարդիզին:

Մնամ ձեր Արշակ Դամաղյանց»:

Յերբ Սաքուլենց տղան նամակն ու կտոր-  
ները տվեց Արշակի յեղբորը, նա ժալաց:  
Բաց արեց կապոցն ու տանեցիներին կտն-  
չեց: Բոլորը հավաքվեցին նրա գլխին ու սկսե-  
ցին նայել զտրմանքով և ուրախությամբ:

Այն չիթը, վոր Նարգիզի համար եր ուղարկել, շատ սիրուն եր: Ծայրին մի թուղթ եք կպցրել Արշակը, վորի վրա քիմիական մատիտով գրել եր.

«Նարգիզ ջան, ես ծաղկավոր չիթն իմ գործածն ա»:

---

## ԿԱՐՄԻՐ ՔԱՌԱԿՈՒՍԻՆ.

### 1

Մութն ընկավ և առաջին դորտը կռւաց  
Գետառ-չայի ջրերում:

Առվակի յերկու ափերին շինված հողե տնե-  
րում պլատացին աղօտ լույսեր: Հեռվում մի  
դուռ բացվեց և ներս մտավ մեկը, վոր վերա-  
դառնում եր որվա աշխատանքից: Յերկրորդ  
դուռը բացվեց ավելի մոտիկ մի տեղում և յերկ-  
րորդ մարդը ներս մտավ: Խակ յերրորդ դուռը  
վոր բացվեց, դա ջրից մի թիզ բարձր գտնվող  
ջարդուտված դուռ եր: Այնտեղ ել մարդ մտավ,  
վորի թեի տակ կապոց կար:

Խակ չորրորդ դուռը չբացվեց... Նորից լուռ  
ու խաղաղ դարձավ շրջակայքը և յերկրորդ  
դորտը կռւաց Գետառ-չայի ջրերում...

Նեղ փողոցներ կան քաղաքի այդ ծայրա-  
մասում, վորոնք անընդհատ ցեխաշեն պատեր  
ունեն և ուրիշ վոչինչ: Լուսամուտները չատ քիչ  
են այդ ցեխե պատերի վրա, նրանք փոքր են  
ու սեացած:

Նեղ փողոցներով յերկու մարդ չեն կարող  
անցնել կողք-կողքի: Նրանք իրար կդիմչեն և  
վայր կդլորվեն: Գետք և միմյանց յետեից

էնան։ Այդքան նեղ են այդ փողոցները։ Նրանք  
լապտերներ չունեն և լուսի շող անգամ չկա-  
այնտեղ։ Ամպ գիշերներն այնտեղ վոչինչ չի յե-  
րելում։

Այդ փողոցները վոլորապտույտ են։ Յու-  
րաքանչյուր տաս-տասնհինդ քայլից հետո մի  
ուրիշ նեղ փողոցի անցք ե բացվում և նոր փո-  
ղոցի մեջ ել ուրիշ-ուրիշ անցքեր։ Յեզ այդպես  
շարունակ։ Ու բոլորն ել նեղ, նեղ ու մութ...

Յերրորդ գորտը կոռաց յերկա՞ր, յերկար  
և մյուս յերկու գորտերի հետ սկսեց յերգել  
Գետառ-չայի ջրերում...

Նեղ փողոցներից մեկով, —անանուն նեղ  
փողոցներից մեկով, —մի թուրք աղջիկ եր  
քայլում։

Աղջիկը քայլում եր արագ-արագ և յերեսում  
եր, վոր իրեն ծանոթ են այդ նեղ-նեղ փողոց-  
ները։ Նա չադրայով եր և հեռվից նման եր չչի։

Յերբեմն նա յետ եր նայում և ավելի յեր  
արագացնում քայլերը։ Քսան քայլի վրա  
նկատվում եր ինչ վոր մարդ։

Նեղ են այդ փողոցները և յերկու մարդ չեն  
կարող անցնել կողք-կողքի։ Նրանք իրար յե-  
տեմից պիտի դնան։ Դրա՞ համար եր անծա-  
նոթ մարդն աղջիա յետեմից գնում։ Ուրեմն,  
ել ինչո՞ւ համար եր շտապում աղջիկը...

Յերբ չադրայի վերջին ծայրն անհետա-  
ցավ մի նեղ փողոցի անկյունի յետեմում, մարդն  
արագացրեց քայլերը։ Նա ել ծովեց այդ նեղ  
փողոցով։ Աղջիկը յետ նայեց։ Յերբ տե-

սավ մարդուն, վազեց : Մարդը նույնպես վազեց  
նրա յետևից :

Սպիտակ շիշը թռչում եր նեղ փողոցով,  
իսկ նրա յետևից այն մարդը : Ողի՞, ողի՞...  
Ողի՞ յե լցված այն շի մեջ, հարբեցնող, գրա-  
վիչ : Գինի՞ կա այն շի մեջ, աչքեր մթնագնող  
ու կրքեր բորբոքող : Շի՞շը... Շիշն ինչո՞ւ յե  
թռչում :

Մարդը չի արողացավ հասնել աղջկան, յետ  
մնաց ու լուծվեց խավարի մեջ : Չորրորդ գոր-  
տը կռուց Գետառ-չայի ջրերում, չորրորդ  
դուռը շբխկաց և չաղբայով աղջիկը ներս ըն-  
կավ :

2

Յերեանի շենքերի պատերին խաչածե  
նշաններ կան : Շտապ մի ձեռք, կոպիտ վրձի-  
նով խաչ և նկարել, իսկ ներկն այդ խաչի թե-  
զերից կաթիլներով հոսել ե վար : Հետո այդ  
շտապ նկարող ձեռքն անցել ե մի ուրիշ տեղ՝  
նույն նշանը դնելու :

Քաղաքի կենտրոնական մասերում դրանք  
սակավաթիվ են, բայց Գետառ-չայի նեղ փո-  
ղոցներում չափազանց շատ կան դրանցից : Ի՞նչ  
նշաններ են դրանք, այդ անխուսափելի խաչա-  
ձեվերը :

Շատերն այդ նշանների իմաստը հասկա-  
նում են միայն այն ժամանակ, յերբ մի ճար-  
տարապետ, շրջապատված բանվորներով, մո-  
տենում է դրանցից մեկին և ասում .

— Քանդել . . .

Ու կիսում են փողոցը, շենքը, սենյակը, պատը, և մի նոր փողոց են բաց անում: Հետո քարտաշներ ու վորմնաղիրներ են գալիս, մի նոր քարաշեն շենք շինելու համար:

Գետառ-չայի նեղ փողոցներից մեկում, ցե-խաշեն պատերից մեկի վրա, այդ նշանից կա դրված, իսկ պատի բարձրում կա մի փոքրիկ լուսամուտ: Դա մի տուն է, ուր ապրում ե չաղ-քայով թուրքի աղջիկը, Զահիրան, վոր հեռվից շենք յե նմանում:

Յերբ վերջին դորտն իր ձայնն ե կտրում Գևտառ-չայի ջրերում, և լույն սկսում ե բաց-վել, Զահիրայի տանից դուրս ե գալիս մի թուրք բանվոր և գնում ե աշխատելու:

Նա վերադառնում ե տուն միայն ուշ գիշե-րով, յերբ ամբողջ Գետառ-չայի յերկարու-թյամբ գորտերը կոռում են իրենց ճահճային համերգը: Գործից հետո նա սիրում ե զնալ չայխանա և նարդի խաղալ: Զահիրայի հայրն ե նա: Մի ժամանակ, յերբ զեռ ջահել եր, նա ցե-խե աղյուսներ եր պատրաստում ցեխաշեն պա-տերի ու շենքերի համար: Այն ժամանակ նու յերկում եր մելմաղձոտ «Քյարփիչ» յեղանա-կը: Հիմա ել ե նա «Քյարփիչ» յերդում, բայց ցեխե աղյուսի վոխարեն սև քար ե տաշում: Բոլորը գիտեն, վոր այդ մարդը մի զեղեցիկ աղջիկ ունի և նրա անունը Զահիրա յե . . .

Մենակ մնալիս, Զահիրան նստում ե լուսա-մուտի յետե, նայում ե դուրս ու մտածում:

ինչ լավ կլիներ, յեթե լայն ու լուսավոր լիներ այդ փողոցը, վորտեղ ինքն եր ապրում, դորտերը չկռոային այդպես ճահճային, խոնավ կռոցով, անցուղարձ լիներ և ամայություն չտիրեր: Բայց Գետառ-չայի փողոցներն ամայի յեն առավոտից յերեկո, և հազիվ մի քանի մարդիկ են անցնում ամբողջ որվա ընթացքում:

Դոնե գային քանդող մարդիկ ու այդ խաչի ձուից սկսած քանդեյին և բաց անեյին մի լայն ու լուսավոր փողոց, քարե շենքերով:

Կոմսոմոլիստկա ֆաթման պատմել ե Զահրային, վոր այդպես պիտի լինի: Նա նույնիսկ տեսել է Յերեանի նոր հատակագիծը, այդ գեղեցիկ, հեռուվոր ու անծանոթ հատակագիծը...

...Ելի յերեկոն իջավ և ելի առաջին գորտը կռուաց Գետառ-չայի ջրերում...

### 3

Իրիկունից առավոտ, առավոտից իրիկուն, համարյա թե բոլորովին ուրիշ կյանքով՝ ապրում ե յերելորդ Յերեանը: Ապրում ե քաղաքի ծայրամասերում, Գետառ-չայի ափերին ու նրանից ել այն կողմ, ապրում ե նորքում, կոնդում և մյուս թաղամասերում: Շուկայում յետ ընկած չայխանաներ կան, վոր յետ ընկած տեղերում են գտնվում: Այնտեղ յերելորդ Յերեանի մարդիկն իրենց կյանքի մեծ ժամանեն անցկացնում: Մեացած սեղաններ կան

այդ չայխանաներում, իսկ սեղանների վրա  
կեղաստ նարդիներ: Այդ նարդու սեղանների  
շուրջն ե զեռ ապրում յերկրորդ Յերեվանը...

Եերբ մի չայխանայի դռնով ըստ սովորա-  
կանի ներս եր մտնում Զահրայի Հայըը նարդի  
խաղալու, մի ուրիշ դռնով, իրենց տան դռնով,  
Զահրան դուրս յեկավ: Յեզ վորովհետեւ յերեկո  
յեր ու մութը, դրա համար ել նա արագ-արագ  
անցավ նեղ փողոցներով: Հիմի այստեղ, լայն  
Արովյանում այնքա՞ն լույս և ու բաղմա-  
մարդ... ինչքան մոտիկ, բայց ինչքա՞ն հեռու  
յի թվում այդ փողոցը...

Մի կամուրջ կա: Յերբ անցնես այդ կամրջի  
մյուս կողմը, դու արդեն առաջին Յերեանում  
կլինես: Լայն ու լուսավոր, քարաշեն Յերնա-  
նում, վոր բաղմամարդ ե:

Զահրան անցավ այդ կամուրջով: Տակից <sup>ա</sup>  
գնում եր բարակ ու փոքրիկ Գետառ-չայր: <sup>օ</sup>

Մնաս բարե, Գետառ-չայ, տխուր ու ան-  
տանելի առվակ: Նա մի քանի ժամով դուրս և  
դալիս քո տիրապետության ըրջանից...

Յեռվում, յերկնքի վրա, յերեսում եյին  
ելեկտրական լույսերի շողքերը: Զահրան առաջ  
անցավ և թակեց մի քարաշեն տան դռւոք:

— Ֆաթմա...

— Զահրա... Դո՞ւ յես: Յես իսկույն  
կգամ...

Ու Ֆաթման շոապ դուրս յեկավ տանից:

— Զադրաս վերցրու, —ասաց Զահրան ու

յետ ոչ եց չաղքան։ Ֆաթման այն ներս տարավ  
և վերադարձավ։

— Գնա՞նք...

Գնացին։ Հայրը շատ պիտի բարկանար,  
յեթե տեսներ Զախրային առանց չաղքայի, քա-  
ղաքի այլ մասերում և անհամուս համարվող  
այդ կոմյերիտուհու հետ։ Բայց նա չեր կարող  
տեսնել, վորովհետեւ չայխանաները հեռու յեն  
Արովյանից և չայխանայի հաճախորդը հազիվ  
թե քաղաքի կենտրոնական մասերում լինի։

Ամեն շաբաթ. մի կամ յերկու անգամ Զախ-  
րան դուրս եր գալիս և գնում եր Ֆաթմայի  
մոտ։ Այսուղից յերկուսով գնում նյին վորեն  
տեղ։ Զախրան շատ եր սիրում կինո գնալ։

— Զախրա, — ասաց Ֆաթման, — ուզո՞ւմ ես  
այսոր ել վնանք թատրոն։

— Ուզում եմ...

Եերբ նրանք հասան թատրոն և վեր բարձ-  
րացան սանդուղքով, նրանց հանդիպեցին շատ  
ընկերներ և ընկերուհիներ։ Հասարակության  
միջից առանձնանալով, նրանք մոտեցան Զախ-  
րային ու Ֆաթմային։ Այնքան ուրախ անցավ  
ժամանակը և հաճելի...

...իսկ այնտեղ, Գետառ-չայի ափին, հի-  
մի խալար և գորտերն են կռուում անդադար։  
Ամայի և նեղ փողոցներում վոչ վոք չկա...

— Նայի՛ր, — ընդհատեց Ֆաթման Զախրա-  
յի մտքերը։ Տեսնո՞ւմ ես պատի վրայի նկա-  
րը։ Դա յե նոր Յերևանը։

Զախրան արագ մոտեցավ պատին, սակայն

վոչինչ չկարողացավ վորոշել զանազան գույնի  
ու ձեի գծերի և նշանների միջից։ Ընկերներից  
մեկն սկսեց բացատրել։

— Իսկ այս կարմիր քառակուսին, վոր կա,  
մի մեծ շենք ե, վոր պիտի շինվի ձեր թա-  
ղում, ձեր տան տեղը……

Զաիրան նայում եր ակնապիշ……

#### 4

Զաիրան տուն վերադարձավ։ Ճանապարհը  
նույնն եր, ամեն ինչ նույնն եր, բայց այդ դի-  
շեր վոչ վոք չետևեց իրեն և նա ուրախ եր դրա  
համար։ Տանը մարդ չկար։ Հայրը դեռ չեր յե-  
կել։ Նա դիմա ո՞վ դիտե վոր չայխանայում՝  
իսպամ եր իր հավիտենական նարդին։

Զաիրան նստեց։ Դեռ չեր մոռացել քիչ ա-∞  
ուաշվա լսածը։ Յերազային, բայց վոչ հեռու մի∞  
աշխարհի նման, դեմից նրան ժպտաց լուսավոր  
Յերեանը և այդ Յերեանը կառուցող կոմյերի-  
տական բանակը։ Վաղուց նրա մեջ արթնացած  
մի ցանկություն մարմնավորելու յեր ձգտում։  
Նոր դիմադրության մասին նա այլևս չեր մտա-  
ծում……


Այդ դիշեր Գետառ-չայի ջրերում նորից  
ուռրտերը յերգեցին իրենց ճահճային յերգը,  
բայց Զաիրային թվաց, թե նրանք յերգում են  
վերջին անգամ, մահամոտ մի սարսուռով……

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0041262

ԳԽԸ 1 Ր.



ՄԵԿ  
օՐԻՆԱԿ



ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

Первые рассказы

Гиз. ССР Армения, Эривань.